

**ՍԵՎԱՆԱ ԼճԻ ԱՎԱԳԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ
ԳՈՐԾԻՔԱԿԱԳՄԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**



Րեղիսակներ

Սիրանուշ Զարուբյունյան
Տաթև Զարոյան
Աննա Կարապետյան

Երևան
2022



Ուսումնասիրությունն իրականացվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Մասնակցային ժողովրդավարությունը գործողության մեջ» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է նպաստել պետական կառավարման և ժողովրդավարական գործընթացներում ապացույցների վրա հիմնված և մասնակցային որոշումների կայացմանը: Ծրագիրն իրականացվում է «Թրանսփարենսի Ինքերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի և իր գործընկերների՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «Քաղաքական երկխոսություն» ՀԿ-ների կողմից

Սույն զեկույցը հրապարակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Չեկույցի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և այն չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ԱՄՓՈՓԱԳԻՐ	4
ՆԱԽԱԲԱՆ	5
ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ	6
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	7
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	8
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	9
ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	11
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	31
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՍԵՎԱՆԱ ԼԾԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ	36
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ	42

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերության
ԳԷՀ	Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՄՋՆ	Եվրամիության ջրային նախաձեռնություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԳԱԱ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՇՄ	Շրջակա միջավայր
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ԸՀԿ	Ըաղաքացիական հասարակության կազմակերպություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Չնայած պետության և միջազգային կազմակերպությունների կողմից ներդրվող ջանքերին՝ ՀՀ ջրային տնտեսությունը ներկայում բախվում է մի շարք խնդիրների, մասնավորապես կապված Սևանի ավազանի պահպանման և կառավարման արդյունավետ պլանավորման, ջրային և ձկնային ռեսուրսների ոչ համարժեք օգտագործման, Սևանա լճի էկոլոգիական խնդիրների, աղտոտման և այլնի հետ:

Հաշվի առնելով Սևանա լճի ունեցած առանցքային և կենսական դերը շրջակա միջավայրի պահպանության, ՀՀ տնտեսական զարգացման համատեքստերում՝ հանրության արդյունավետ և առարկայական մասնակցությունը Սևանա լճի պահպանման և կառավարման վերաբերյալ որոշումների կայացման գործում կարող է նպաստել այս առնչությամբ պետության ավելի թափանցիկ և հաշվետվողական գործունեության ապահովմանը, մասնավոր և պետական հատվածների առավել սերտ և արդյունավետ համագործակցության ամրապնդմանը, հավանական ազդակիրներ համայնքներին տեղեկացնելու և ներգրավելու հանձնառության իրականացմանը, բոլոր ձայների լսված լինելու իրավունքի իրացմանը և հանրության համար ավելի ընդունելի որոշումների կայացմանը:

Վերը շարադրված հանգամանքներով պայմանավորված՝ սույն ուսումնասիրության նպատակն է ներկայացնել և համապարփակ կերպով վերլուծել Սևանա լճի ավազանի պահպանման և կառավարման մի շարք գործընթացներում հանրության մասնակցության առկա իրավական հնարավորությունները և դրանց արդյունավետությանը, վեր հանել առկա հիմնախնդիրները:

Մասնավորապես, ուսումնասիրվել են ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված

- Քաղաքացիական նախաձեռնության իրավունքը,
- Իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության իրավունքը,
- Հանրության մասնակցության իրավունքը Սևանա լճին առնչվող ծրագրերի ռազմավարական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում:

Կիրառված մեթոդները ներառում են ոլորտը կարգավորող իրավական դաշտի, առկա իրավական մեխանիզմների և դրանց գործնական կիրառության ուսումնասիրությունը, մասնավոր դեպքերի ուսումնասիրությունը, ինչպես նաև հարցազրույցները ոլորտի փորձագետների, լիազոր մարմինների, ՀԿ-ների ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչների հետ:

Հատկանշական է, որ Սևանի պահպանման և կառավարման առնչությամբ հանրության մասնակցության ապահովման գործիքակազմի արդյունավետության վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն մինչ այժմ չի իրականացվել:

Ուստի, այս ուսումնասիրության շրջանակներում, բացի բուն օրենսդրական կարգավորումներից, մասնավոր դեպքերի վերլուծությամբ փորձ է արվել ներկայացնել հանրային մասնակցության տարբեր օրենսդրական մեխանիզմների գործնական շրջափուլերը, վեր հանել դրանց շրջանակներում առկա իրավական և/կամ գործնական բացերն ու խնդիրները: Իրականացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա ներկայացվել են նաև հանրային մասնակցության գործիքակազմերի և ոլորտի արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք օրենսդրական և տեխնիկական առաջարկություններ:

Վերը շարադրվածից զատ կատարվել է նաև միջազգային կազմակերպությունների կողմից Սևանա լճի խնդիրներին առնչվող աջակցության ծրագրերի քարտեզագրում հասարակության մասնակցության բաղադրիչների ներկայացմամբ, որոնցում օգտագործված և զեկույցում ներկայացված մեթոդաբանությունները կարող են օգտակար ուղենիշներ հանդիսանալ հանրային քննարկումների ընթացքում հանրության հետ ավելի արդյունավետ և առարկայական համագործակցության ձևավորման գործում:

ՆԱԽԱԲԱՆ

Սույն զեկույցի **նպատակն** է վերլուծել Սևանա լճի ավազանի պահպանմանը և կառավարմանը վերաբերող մի շարք գործընթացներում հանրության մասնակցության համար պետության կողմից տրամադրված իրավական հնարավորությունները, դրանց կիրառելիությունը և արդյունավետությունը:

Չեկույցի խնդիրներն են՝

- Դասակարգել և ուսումնասիրել Հայաստանի հանրապետության ջրային ռեսուրսների կառավարմանը (մասնավորապես՝ Սևանա լճի կառավարմանը) վերաբերող հանրային մասնակցության համար նախատեսված իրավական գործիքակազմը, մասնավորապես հանրային քննարկումները, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (այսուհետ՝ «ՇՄԱԳ»), քաղաքացիական նախաձեռնության իրավունքը, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը, Սևանա լճի վերաբերյալ հարցերով անկախ մասնագիտական մարմինները:
- Փաստաթղթերի և առկա տվյալների, ոլորտի մասնագետների հետ հարցազրույցների, ինչպես նաև կոնկրետ դեպքերի ուսումնասիրության միջոցով վերլուծել Սևանա լճի կառավարման և պահպանման գործընթացներում հանրային մասնակցության իրավունքի իրացման արդյունավետությունը և վեր հանել վերջինիս հետ կապված խնդիրները:
- Վեր հանված խնդիրների հաշվառմամբ՝ մշակել հանրային մասնակցության ավելի արդյունավետ իրավական մեխանիզմների վերաբերյալ առաջարկություններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չնայած ՀՀ Կառավարության ջանքերին և միջազգային կազմակերպությունների աջակցությանը, ՀՀ ջրային տնտեսությունը ներկայում բախվում է բազմաթիվ խնդիրների: Մտահոգություններ կան Սևանի ավազանի պահպանման և կառավարման արդյունավետ պլանավորման, Սևանա լճի ջրային և ձկնային ռեսուրսների ոչ համարժեք օգտագործման առնչությամբ: Հաշվի առնելով Սևանի ունեցած առանցքային դերը՝ այն ուղղակիորեն մեծ ազդեցությունը ունի ՀՀ ամբողջ ջրային ռեսուրսների պլանավորման և կառավարման վրա: Ուստի, համարում ենք, որ Սևանի պահպանման և կառավարման գործում որոշումների կայացմանը հանրության մասնակցությունը կարող է նպաստել այս առնչությամբ պետական ավելի թափանցիկ և հաշվետվողական գործունեության ապահովմանը, իրավական տեսանկյունից հանրության լայն զանգվածների համար ընդունելի ծրագրերի իրականացմանը, հանրային նախաձեռնությունների ավելի արդյունավետ իրականացմանը և շահագրգիռ կողմերի միջև կոնֆլիկտների նվազեցմանը, ինչպես նաև պետական մարմինների գործունեության նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

Սակայն, Սևանի պահպանման և կառավարման առնչությամբ հանրության մասնակցության ապահովման գործիքակազմի արդյունավետությունը մինչ այժմ համապարփակ կերպով չի ուսումնասիրվել և գնահատվել: Հետևաբար, սույն ուսումնասիրությունը անդրադառնում է Սևանա լճի ավազանի պահպանման և կառավարման մի շարք գործընթացներում հանրության մասնակցության իրավական հնարավորություններին և դրանց արդյունավետությանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության մեթոդները ներառում են իրավական ակտերի, փաստաթղթերի ուսումնասիրություն, պաշտոնական էլեկտրոնային հարթակներում առկա տեղեկատվության վերլուծություն, հարցազրույցներ և դեպքերի վերլուծության մեթոդը: Ուսումնասիրությունն իրականացվել է 2018թ-ից մինչև 2022թ-ի նոյեմբեր ամիսը ընկած ժամանակահատվածի համար:

Ուսումնասիրված իրավական ակտերը ներառում են՝ ՀՀ Սահմանադրությունը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը, ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», «**Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի n 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**» ՀՀ կառավարության 10.10.2018 թվականի N 1146-Ն որոշումը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» 19.11.2014 թվականի N 1325-Ն ՀՀ կառավարության որոշումը, «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը:

Ուսումնասիրված փաստաթղթերը ներառում են՝

- Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027թթ. կառավարման պլանը,
- «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևանի թերակղզու ռեկրեացիոն գոտում Արտաշ Գրիգորյանի կողմից ժամանցի բազմաֆունկցիոնալ հանգստի գոտու կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտը և դրա վերաբերյալ ՀՀ ՇՄ նախարարության կողմից 06.04.2022 թվականին տրված ԲԲ 0032-22 պետական փորձաքննական դրական եզրակացությունը:

Պաշտոնական էլեկտրոնային հարթակների ուսումնասիրությունը ներառում է՝

- Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը (www.e-draft.am),
- ՇՄ նախարարության պաշտոնական կայքէջը,
- Սևանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջը,
- ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պաշտոնական կայքէջը,
- Հանրային մասնակցության մասին առկա միջազգային գրականությունը:

Միջազգային փորձը կիրառելու մասով նաև ուսումնասիրվել են միջազգային ծրագրերում օգտագործվող մասնակցային պրակտիկաները:

Հարցազրույցներ. հետազոտության շրջանակներում նաև հարցազրույցներ են անցկացվել Սևանա լճի կառավարման և պահպանման շուրջ գործունեությունն ծավալող պետական մարմինների, բաղաբաղիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ «ԲՀԿ»), մասնավոր և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչների հետ: Հարցազրույցները վերաբերել են մասնակցության առկա հնարավորություններին և գործիքներին, միջազգային կազմակերպությունների կողմից Սևանա լճի պահպանմանն ուղղված իրականացվող ծրագրերի մասնակցային բաղադրիչին, հանրային մասնակցության հետ կապված օրենսդրական բացերին և կարիքներին, ինչպես նաև մասնակցության բարելավման ուղղությամբ առաջարկություններին: Ընդհանուր առմամբ, անց է կացվել 16 հարցազրույց: Հարցազրույցների արդյունքները ենթարկվել են համապարփակ վերլուծության, հաշվի են

առնվել եզրահանգումների մեջ, ինչպես նաև դրանց հաշվառմամբ մշակվել և ստորև ներկայացվել է «Առաջարկություններ» բաժինը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հանրության մասնակցությունը հասարակության անդամների ներգրավումն է հանրային օրակարգի ձևավորման, որոշումների կայացման և քաղաքականության մշակման մեջ՝ այս գործառնությունների համար պատասխանատու հաստատությունների կողմից: Հանրության մասնակցությունը կողմ փաստարկներն են՝ դրա բացակայության դեպքում իշխանության նկատմամբ քաղաքացիների վստահության հնարավոր նվազումը, որոշումների կայացման ավելի մեծ լեգիտիմության և հաշվետվողականության ապահովումը, իշխանությունը ժողովրդին մոտեցնելու ցանկությունը:

Ժողովրդավարության տեսության համաձայն՝ հանրային մասնակցության կիրառումը տարբեր նպատակներ և պատճառներ ունի: Կարծիք կա, որ այն կայացած ժողովրդավարության հիմնարար տարրերից է և պետք է ինքնին գոյություն ունենա: Մասնագիտական շրջանակներում տարածված մեկ այլ կարծիքի համաձայն՝ մասնակցությունն իրական արդյունքի հասնելու, ինչպես նաև ավելի տեղեկացված, հաշվետու, օրինական որոշումներ կայացնելու կամ պատասխանատվությունը կիսելու միջոց է: Այս տեսանկյունից կարևորվում է ավելի կրթված, երկրի զարգացման որոշումներին մասնակցող և ներգրավված քաղաքացիներ ունենալու ցանկությունը:¹²³

Հանրային մասնակցության մեջ տարանջատում են հանրության ներգրավումը և հանրության իրազեկումը:

Ներգրավումը ենթադրում է հանրության հետ ակտիվ փոխհարաբերություններ՝ երկխոսություն, կարծիքների և տեղեկատվության փոխանակում, մինչդեռ հանրության իրազեկումը տեղեկատվության փոխանցումն է՝ պաշտոնական աղբյուրներից:

Տեսականորեն, հանրային մասնակցությունը կարող է ապահովել ավելի որակյալ որոշումներ (հանրային կարծիքի ներառման շնորհիվ), որոշումների ընդունման ավելի հեշտ գործընթաց (հանրային դժգոհությունը կանխելու միջոցով), որոշումներ կայացնողների նկատմամբ ավելի մեծ վստահություն (հանրային կարծիքի նկատմամբ հարգանք ցուցաբերելու միջոցով) և փոխադարձ ուսուցման հնարավորություններ:^{4,5} Այս պնդումները հաստատող փորձառական ապացույցներ, սակայն, գրականության մեջ քիչ կան:⁶

¹Abelson, Julia & Eyles, John. (2004). Public participation and citizen governance in the Canadian health system. *Changing Health Care in Canada: The Romanow Papers*. 2. 279-311.

²Abelson J, Forest P-G, Eyles J, Smith P, Martin E, and Gauvin F-P. "Obtaining public input for health-systems decision making: Past Experiences and Future Prospects". *Canadian Public Administration* 2002, 45(1) Spring: 70-97.

³Gene Rowe, Tom Horlick-Jones, John Walls, Wouter Poortinga, Nick F. Pidgeon. Analysis of a normative framework for evaluating public engagement exercises: reliability, validity and limitations. *Public Understanding of Science*, SAGE Publications, 2008, 17 (4), pp.419-441. 10.1177/0963662506075351. hal-00571120

⁴Beierle, T.C. and Cayford, J. (2002) *Democracy in Practice: Public Participation in Environmental Decisions*. Washington DC: Resources for the Future.

⁵Rowe, G. and Frewer, L.J. (2005) "A Typology of Public Engagement Mechanisms," *Science, Technology and Human Values* 30(2): 251-90.

⁶Gene Rowe, Tom Horlick-Jones, John Walls, Wouter Poortinga, Nick F. Pidgeon. Analysis of a normative framework for evaluating public engagement exercises: reliability, validity and limitations. *Public Understanding of Science*, SAGE Publications, 2008, 17 (4), pp.419-441.

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում հանրային մասնակցությամբ որոշումների կայացման պրակտիկաները գտնվում են շարունակական զարգացման փուլում: Այս առնչությամբ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված առանցքային քայլերից են 2011թ.-ին Բաց կառավարման գործընկերության (այսուհետ՝ «ԲԿԳ») նախաձեռնությանը միանալը, 2016թ.-ին ՀՀ կառավարության կողմից Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի (www.e-draft.am) գործարկումը, նախարարներին կից հասարակական խորհուրդների ստեղծումը:⁷

Ազգային օրենսդրություն

ՀՀ Սահմանադրությունը մի շարք քաղաքացիական և քաղաքական իրավունքներ է սահմանում, ներառյալ՝ տեղեկություններ ստանալու իրավունքը, կարծիք արտահայտելու ազատությունը, հավաքների ազատությունը, միավորումների ազատությունը, կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը, հանրաքվեին մասնակցելու իրավունքը և հանրագիր ներկայացնելու իրավունքը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Ըստ այս օրենքի՝ տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքներից մեկը համայնքի բնակիչների մասնակցությունն է տեղական ինքնակառավարմանը, որը սահմանվում է որպես *«համայնքում իրականացվող գործընթաց: Դրա միջոցով բնակիչներն, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա»*: Օրենքը հնարավորություններ է նախատեսում համայնքի կառավարման վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության, ավագանու նիստերին քաղաքացիների մասնակցության և քաղաքացիական նախաձեռնության միջոցով նիստի օրակարգ հարց ներառելու, համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի մշակմանը մասնակից լինելու համար:⁸

2018թ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք

Նախատեսում է օրենսդրական նախագծերի վերաբերյալ պարտադիր հանրային քննարկումների դրույթ, բացառությամբ միջազգային պայմանագրերի վավերացման (միանալու) օրենքի նախագծի: Այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման կարող են ներկայացվել նախագիծը մշակող կամ ընդունող մարմնի նախաձեռնությամբ: Հանրային քննարկումն օրենքով սահմանվում է որպես *«նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրապեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց»*:⁹

Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը (ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշում) սահմանում է նորմատիվ իրավական

⁷ Հայաստանի Հանրապետության Կառավարություն որոշում 31 մարտի 2016 թվականի N 337-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին <https://www.arlis.am/documentview.aspx?docid=104665>

⁸ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» (օրենքը խմբ. 16.12.16 ho-237-ն): Հոդված 11: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153407>

⁹ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի» մասին: Ընդունման ամսաթիվը՝ 21.03.2018: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733>

ակտի նախագծերի իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, այդ գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով՝ այդ նախագծերի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթացի կարգը:¹⁰

ՀՀ ԱԺ-ի կանոնակարգ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ և 14-րդ հոդվածի 4-րդ կետեր

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացում ԶՀԿ-ների մասնակցության իրավական հիմքերը սահմանված են ՀՀ ԱԺ-ի կանոնակարգ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ և 14-րդ հոդվածի 4-րդ կետերով: Համաձայն 12-րդ հոդվածի 5-րդ կետի, *«Մշտական հանձնաժողովը կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ»*: Համաձայն 14-րդ հոդվածի 4-րդ կետի՝ *«Մշտական հանձնաժողովի նիստերը հրապարակային են, այսինքն՝ կարող են մասնակցել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ՝ կանխավ գրանցվելու միջոցով: Մշտական հանձնաժողովի փակ նիստն անցկացվում է Կանոնակարգի 88-րդ հոդվածի 6-րդ, 93-րդ հոդվածի 2-րդ եւ 117-րդ հոդվածի 6-րդ մասերով սահմանված դեպքերում»*:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը սահմանում է Սևանա լճի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները, անդրադառնում է լիազորված պետական կառավարման մարմինների և ինքնակառավարման մարմինների իրավասություններին, որոնք ներառում են հանրային բնարկումների կազմակերպումը և համայնքի բնակչության ներգրավումը:¹¹

«Զրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ՀՀ ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները: Օրենքի 36-րդ հոդվածը վերաբերում է հասարակության իրազեկությանը և մասնակցությանը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության որոշումների ընդունման գործընթացում, ջրային ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությանը և պատշաճ ձևով հասարակության ծանուցմանը՝ պետական լիազորված մարմինների կողմից:¹²

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, ներառյալ անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ի լրումն գնահատման և փորձաքննության գործընթացի սահմանմանը, օրենքը նկարագրում է հանրության ծանուցման և բնարկումների իրականացման կարգը, նաև սահմանում է գործընթացի համար ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, գործընթացի մասնակիցներ հասկացությունները:¹³

Միջազգային կոնվենցիաներ և համաձայնագրեր

ՀՀ-ի վավերացրած միջազգային փաստաթղթերը, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին և անդրադառնում են մասնակցային կառավարմանը, ներառում են ՄԱԿ-ի

¹⁰<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002>

¹¹<https://www.arlis.am/documentview.aspx?docid=891>

¹²<http://www.irtek.am/views/act.aspx?aid=150170>

¹³<https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, ՄԱԿ-ի Միջազգային դաշնագիրը՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին:

Հայաստանը մասնակից է միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի, որոնց ազդեցությունը տարածվում է նաև Սևանա լճի վրա: Դրանք են՝ «Կենսաբազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան (Ռիո դե Ժանեյրո, 1992), ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան «Կլիմայի փոփոխության մասին» (Նյու Յորք, 1992), «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիան (Բեռն, 1979), ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիան (Փարիզ, 1994), «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հասարակայնության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության մասին» (Օրիուս, 1998) կոնվենցիան, «Միջազգային կարևոր նշանակություն ունեցող խոնավ տարածքների, հատկապես որպես ջրային թռչունների բնակավայր» կոնվենցիան (Ռամսար, 1971), «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան (Փարիզ, 1972):¹⁴ Որոշումների ընդունման գործում հանրության մասնակցությունը խթանող մեխանիզմ է **«Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական կոմիտեի կոնվենցիան** (1998), որը ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2001 թվականին: Կոնվենցիայի նպատակն է աջակցել մարդկանց բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանը՝ շրջակա միջավայրի հետ կապված որոշումների կայացման մեջ հասարակության մասնակցության իրավունքի, արդարադատության մատչելիության և տեղեկատվության մատչելիության իրավունքի երաշխավորման միջոցով:¹⁵

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ հռչակված է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Սա նշանակում է, որ պետության կառավարմանը հանրության իրազեկվածության և մասնակցության նորանոր մեխանիզմների ստեղծումը, կիրառումը և բարելավումը հանդիսանում են ՀՀ առանցքային առաջնահերթություններից:

Վերը շարադրվածը վերաբերվում է նաև բնապահպանության, այդ թվում նաև Սևանա լճի ավազանի պահպանման և կառավարման ոլորտի վերաբերյալ հանրային իրազեկվածությանն, այդ ոլորտի կառավարմանը հանրության մասնակցության իրավական հնարավորություններին, դրանց իրացման գործիքակազմի բարելավմանը:

Ուստի, հաշվի առնելով սույն ուսումնասիրության խնդրո առարկան և ելնելով այս ոլորտը կարգավորող ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր իրավակարգավորումներից, Սևանա լճի ավազանի պահպանման և կառավարման վերաբերյալ հարցերին հանրության մասնակցության իրավական հնարավորությունները կարելի է բաժանել հետևյալ երեք հիմնական խմբերի.

ա) Քաղաքացիական նախաձեռնության իրավունք,

¹⁴<https://iwlearn.net/resolveuid/6af5017fa3a56bc7b8428f71c100362e>

¹⁵<https://www.arlis.am/documentview.aspx?docID=77849>

բ) Իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության իրավունք,
գ) Հանրության մասնակցության իրավունքը Սևանա լճին առնչվող ծրագրերի ռազմավարական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում:

ԲԱԺԻՆ Ա. ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱԾԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵԸ

Քաղաքացիական նախաձեռնությունը, ըստ էության, հանդիսանում է օրենսդրական նախաձեռնության տարատեսակ՝ վերապահված հանրությանը, որն առաջին անգամ ՀՀ իրականություն է ներմուծվել 2015 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված է, որ *«Ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք»*: Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի ՀՀ Ազգային ժողովի կողմից քննարկման կարգը նախատեսված է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքով:

Այս առնչությամբ հատկանշական է Սահմանադրության 204-րդ հոդվածով ամրագրված իրավադրույթը, ըստ որի. *«Եթե Ազգային ժողովը մերժում է Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո՝ վաթսուն օրվա ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող: Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»*:

Վերը շարադրվածից բխում է, որ, ներկայումս, հանրությունը ինչպես այլ, այնպես էլ շրջակա միջավայրին առնչվող, այդ թվում՝ նաև բնապահպանության, Սևանի ավազանի պահպանմանը և կառավարմանը վերաբերվող հարցերի մասով, ըստ էության, ունի օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու որոշակի օրենսդրական լծակներ:

Ուստի, օրենքով նախատեսված ընթացակարգերի պահպանման և պահանջների բավարարման դեպքում, հանրությունը կարող է Սևանի ավազանի պահպանմանը և կառավարմանը վերաբերվող հարցերի առնչությամբ ևս որոշակի օրենսդրական կարգավորումների (փոփոխությունների, լրացումներ) հեղինակ դառնալ:

Չնայած վերը շարադրվածի՝ հարկ է նշել, որ 2015 թվականից մինչ օրս որևէ քաղաքացիական նախաձեռնություն ինչպես շրջակա միջավայրին, այնպես էլ այլ ոլորտներին վերաբերվող հարցերի առնչությամբ չի իրականացվել: Ավելին, այս ինստիտուտի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բացահայտման նպատակով ուսումնասիրության ընթացքում մի շարք իրավաբանների հետ իրականացվել են նաև կարճ հարցուպատասխաններ: Հարցերը մասնավորապես ներառում էին հետևյալը. 1) ինչ է իրենից ներկայացնում քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը, 2) ինչ ընթացակարգերի պահպանմամբ այն պետք է իրականացվի և 3) որ հարցերի վերաբերյալ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը չի գործարկվում: Հարցումների արդյունքների ամփոփումից, սակայն պարզ դարձավ, որ մասնակիցների հիմնական մասն այս ինստիտուտի վերաբերյալ տեղեկացված չէին կամ տեղեկացված լինելու դեպքում չունեին ամբողջական պատկերացում այս ինստիտուտի գործարկման ընթացակարգերի վերաբերյալ:

ԲԱԺԻՆ Բ. ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԸ

ՀՀ գործող օրենսդրության համաձայն իրավաստեղծ գործընթացում սոցիալական լայն խմբերի, հասարակական միավորումների ներգրավման և հանրության կարծիքի բացահայտման առանցքային գործիքներից է հանդիսանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ «ՀՕ-180-Ն օրենք») նախատեսված հանրային քննարկումները:

Մինչ անդրադառնալը Սևանա լճի ավազանի պահպանմանն ու կառավարմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին, նախ, հակիրճ ներկայացնենք, թե ինչ է իրենից ներկայացնում այս ինստիտուտն իրավական ակտերի նախագծերի քննարկման գործընթացում:

ՀՕ-180-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն «հանրային քննարկում» հասկացությունը սահմանված է որպես իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց:

ՀՕ-180-Ն օրենքի համաձայն՝ հանրային քննարկումների գործընթաց չի իրականացվում միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագծի, Ազգային ժողովի պատգամավորների կամ խմբակցությունների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվող օրենքների կամ Ազգային ժողովի որոշումների նախագծերի, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված օրենքի նախագծերի առկայությամբ:

Չնայած վերը շարադրվածի՝ որպես Ազգային ժողովի կողմից օրինաստեղծ գործունեության շրջանակներում հանրության մասնակցության մեխանիզմ, կարելի է նշել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված մշտական հանձնաժողովների հրապարակային նիստերին մասնակցելու իրավունքը: Գործնականում մշտական հանձնաժողովների նիստերին հրավիրվում են նիստում քննարկման դրված հարցերի առկայությամբ շահագրգիռ կողմ հանդիսացող հասարակական կազմակերպությունների, ընկերությունների ներկայացուցիչներին:

Վերադառնալով իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկմանը՝ ՀՕ-180-Ն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից պարզ է դառնում, որ այն իրականացվում է նորմատիվ իրավական ակտի նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը շահագրգիռ մարմիններ ներկայացնելու հետ միաժամանակ հրապարակելու միջոցով:

Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը նախատեսված է ՀՀ կառավարության 10.10.2018 թվականի N 1146-Ն որոշմամբ (այսուհետ՝ «N 1146-Ն որոշում»):

N 1146-Ն որոշման համաձայն՝ հանրային քննարկումը պարտադիր իրականացվում է քննարկումն իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (այսուհետ՝ «Միասնական Կայք») հրապարակման եղանակով:

Ներկայումս, Միասնական կայքը՝ www.e-draft.am էլեկտրոնային հարթակն է, որը գործարկվում է 2016 թվականից սկսած: Միասնական կայքի այցելուները իրավական

ակտերի նախագծերին ծանոթանալուց զատ, միաժամանակ հնարավորություն ունեն օգտվելու վերջինիս ընձեռած մի շարք գործառույթներից, մասնավորապես՝ մասնակցել իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ քննարկումներին, դրանց վերաբերյալ անել առաջարկներ, դիտողություններ, դեմ կամ կողմ քվեարկել դրանց: Այլ կերպ ասած, Միասնական կայքի միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում նաև քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչները կարող են ակտիվ մասնակցություն ունենալ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին և լսելի դարձնել դրանց առնչությամբ իրենց կարծիքը, մտահոգությունները և առաջարկությունները:

Վերը նշվածից զատ, հարկ է նշել նաև, որ N 1146-Ն որոշման 23-րդ հոդվածի դրույթների համաձայն հանրային քննարկում իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կարող են իրականացվել նաև հանրային լսումները տվյալ ոլորտում մասնագիտացված կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների անցկացման միջոցով, ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով քննարկումների ձևով:

Այն դեպքում, երբ հանրային քննարկում իրականացնող մարմինը նախաձեռնում է հանրային լսումներ, վերջինս պարտավոր է այդ մասին իր պաշտոնական կայքէջում և Միասնական կայքում հրապարակել հայտարարություն: Հայտարարությունը, մասնավորապես, պետք է պարունակի հանրային լսման անցկացման վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի, ինչպես նաև դրան մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից մասնակցության դիմումների ներկայացման վերջնաժամկետի մասին (եթե, ըստ հանրային քննարկում իրականացնող մարմնի, նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) ամբողջական տեղեկատվություն: Ընդ որում, դիմումների ընդունման վերջնաժամկետը չի կարող պակաս լինել, քան հանրային լսման հայտարարության հրապարակման պահից 10 օրը: Նշված հայտարարությունը հանրային քննարկում իրականացնող մարմնի կողմից կարող է հրապարակվել նաև զանգվածային լրատվության միջոցով:

Սակայն, թյուրըմբռնումներից խուսափելու համար, հարկ է ընդգծել, որ հանրային լսումների իրականացման այս մեթոդը իմպերատիվ չէ և դրա անհրաժեշտությունը որոշում է հանրային քննարկում իրականացնող մարմինը միանձնյա կարգով:

Ինչ վերաբերվում է հանրային քննարկումների արդյունքում քննարկման դրված հարցերի առնչությամբ ստացված առաջարկություններին (դիտողություններին), ապա Որոշման համաձայն դրանք բոլորը պետք է հավուր պատշաճի դիտարկվեն և վերլուծվեն հանրային քննարկում իրականացնող մարմնի կողմից, իսկ վերջինիս կողմից ընդունվելու դեպքում՝ իրավական ակտի նախագիծը համապատասխանաբար ենթակա է անհրաժեշտ լրամշակումների:

Սևանա լճի պահպանության և կառավարման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մասով անհրաժեշտ է ընդգծել, որ դրանց հանրային քննարկումների առնչությամբ գործող օրենսդրությամբ որևէ առանձնահատկություն սահմանված չէ: Հետևաբար, այս մեխանիզմը հանդիսանում է նաև Սևանա լճի պահպանությանն ու կառավարմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրության, մասնագիտացված և այլ շահագրգիռ անձանց կարծիքի բացահայտմանն ուղղված միակ իմպերատիվ իրավական գործիքակազմը:

Քանի որ ներկայումս բնապահպանության ոլորտի լիազոր մարմին է հանդիսանում ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (այսուհետ՝ «Նախարարություն»), գործնականում այս ոլորտի իրավական ակտերի նախագծերի հիմնական նախաձեռնող և Որոշման համաձայն դրանց հանրային քննարկումների իրականացման պատասխանատու է հանդիսանում այս Նախարարությունը:

Սակայն Նախարարության կայքէջի, մասնավորապես «Իրավական ակտերի նախագծեր» բաժնի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Նախարարության կայքէջում իրավական ակտերի նախագծերը չեն հրապարակվում, այլ նշված կայքէջը այցելուին միանգամից թույլ է տալիս մուտք գործել Միասնական կայք՝ տվյալ իրավական ակտի նախագծի հրապարակման պատուհան:

Մեր գնահատմամբ այս լուծումը որևէ կերպ չի խախտում հանրության իրազեկվածության և հանրային քննարկումներին մասնակցելու իրավունքը: Հակառակը, Նախարարության կայքից Միասնական կայք մուտք գործելու միջոցով, ըստ էության, հնարավոր է լինում հանրության բոլոր արձագանքները, կարծիքներն ու առաջարկությունները ամբողջացնել մեկ հարթակում ու հասանելի դարձնել բոլորին և ունենալ մեկ ընդհանրական պատկեր:

Ցավոք, Միասնական կայքի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Սևանա լճի պահպանությանը և կառավարմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրականացվող հանրային քննարկումների նկատմամբ հանրության կողմից առանձնապես ակտիվություն չի դրսևորվում:

Դեպքի ուսումնասիրություն 1

Այս առնչությամբ, որպես մասնավոր դեպքի ուսումնասիրություն, կցանկանայինք ներկայացնել Սևանա լճի մասին համալիր և տարեկան ծրագրերի վերաբերյալ իրականացված հանրային քննարկումներն և դրանց արդյունքները:

Ինչպես հայտնի է, 15.05.2002թ. ընդունված «Սևանա լճի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ Սևանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման պետական քաղաքականությունն իրականացվում է Սևանա լճի մասին համալիր ծրագրով (այսուհետ՝ «Համալիր ծրագիր») սահմանված ժամկետներում և կարգով:

Նույն օրենքի 3-րդ մասի վերլուծությունից բխում է, որ Համալիր ծրագրի նախագիծը ՀՀ կառավարությունն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել նշված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում: Ազգային ժողովի կողմից Համալիր ծրագիրը հաստատվել է «Սևանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» 14.12.2001 թվականին ընդունված ՀՀ օրենքի համաձայն: Նշված օրենքի համաձայն Համալիր ծրագրի գործողության ժամկետը սահմանված է 2003 թվականից մինչև 2030 թվականը:

Հատկանշական է, որ տվյալ ժամանակահատվածի ՀՀ գործող օրենսդրության համաձայն ո՛չ ՀՀ կառավարությունը, և ո՛չ էլ Ազգային ժողովն իրավական ակտի նախագծի հրապարակման և դրանց վերաբերյալ հանրային քննարկումների իրականացման մասով որևէ պարտավորություն չի ունեցել: Այդ իսկ պատճառով, սույն զեկույցի շրջանակներում որևէ վերլուծություն չի իրականացվել Համալիր ծրագրի ընդունման գործընթացում հանրության մասնակցության առնչությամբ:

Սակայն, անդրադառնանք նշված օրենքում լրացումներ կատարելու առնչությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացված օրենսդրական նախաձեռնության շրջանակներում հանրության մասնակցությանը և դիտարկենք 2021թ. Սևանա լճից ջրի բաց թողնման տարեկան առավելագույն չափաբանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագրի ընդունմանն ուղղված իրավական ակտի նախագծին: Միասնական կայքի տվյալների համաձայն՝ ««Սևանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի

վերաբերյալ ՀՀ օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը¹⁶ քննարկվել է 13.08.2021 թվականից մինչև 28.08.2021 թվականը և դիտվել է 4272 անգամ: Դրա առնչությամբ որևէ առաջարկություն չի արվել, փոխարենը դեմ է քվեարկել ընդամենը մեկ անձ: Հարկ է նշել, որ սույն նախագծի համապատասխան՝ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 17.08.2021 թվականին գրեթե առանց էական փոփոխությունների:

Միաժամանակ, նշված ժամկետների դիտարկումից ակնհայտ է դառնում, որ օրենքի փոփոխությունն, ըստ էության, ընդունվել է վերը նշված որոշման նախագծի հանրային քննարկման ընթացքում: Այսինքն, առանց նշված որոշման նախագծի վերաբերյալ հանրության վերջնական կարծիքը ունենալու: Մեր գնահատմամբ, նման պրակտիկան էականորեն արժեզրկում է հանրային քննարկումների ինստիտուտը և դրա նկատմամբ հանրության մոտ ձևավորում անվստահություն:

Ինչ վերաբերում է Համալիր ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման տարեկան համամասնություններին, ապա «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրանք սահմանվում են ՀՀ կառավարության կողմից և արտացոլվում Սևանա լճի մասին տարեկան ծրագրերում (այսուհետ՝ «Տարեկան ծրագիր»): ՀՀ կառավարությունը, մասնավորապես, Համալիր ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի մշակում և պետական բյուջեի նախագծի կազմում Ազգային ժողով է ներկայացնում Տարեկան ծրագիրը:

Սույն զեկույցի շրջանակներում իրականացված Տարեկան ծրագրի ընդունման շրջափուլի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Նախարարությունը՝ որպես ոլորտի լիազոր մարմին, մշակում, այնուհետև Միասնական կայքում հրապարակելու միջոցով հանրային քննարկման է դնում Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների հերթական տարեկան ծրագիրը:

Ուսումնասիրելով Տարեկան ծրագրի վերաբերյալ վերջին 4 տարիների ընթացքում Միասնական կայքում իրականացված հանրային քննարկումների արդյունքները, ցավոք, պետք է փաստենք, որ դրանց ընթացքում հանրության մասնակցությունը եղել է բավականին ցածր¹⁷, ինչը փաստում են նաև Նախարարության աշխատակիցները՝ վերջիններիս հետ ունեցած հարցազրույցների ընթացքում:

Մասնավորապես, ըստ Միասնական կայքի տվյալների, 2020 թվականի Տարեկան ծրագիրը¹⁸ հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը հանրային քննարկման է դրված եղել 10.09.2019թ. մինչև 25.09.2019թ. ներառյալ և դիտվել է 6825 անգամ: Այս ժամանակահատվածում, որոշման նախագծի վերաբերյալ արվել է ընդամենը 1 առաջարկություն, որը Նախարարության կողմից մասամբ ընդունվել է, իսկ չընդունված մասով տրվել է բավականին հանգամանալից հիմնավորում:

Ինչ վերաբերվում է 2021¹⁹ թվականի Տարեկան ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծին, ապա ըստ Միասնական կայքի տվյալների դրա վերաբերյալ հանրային քննարկումները կազմակերպվել են 31.08.2020թ. մինչև 15.09.2020թ. ներառյալ և այդ ընթացքում այն դիտվել է 6469 անգամ: Միասնական կայքում

¹⁶ <https://www.e-draft.am/projects/3499/about>

¹⁷ Տվյալ տարիների համար տվյալները նշված են 12.11.2022 թվականի դրությամբ:

¹⁸ <https://www.e-draft.am/projects/1939>

¹⁹ <https://www.e-draft.am/projects/2714>

հրապարակված ամփոփաթերթի վերլուծությունից պարզ է դառնում, որ հանրային քննարկումների ժամանակահատվածում ՀՀ կառավարության նշված որոշման նախագծի վերաբերյալ ներկայացվել է երկու առաջարկություն, որոնց նախարարությունը անդրադարձել է և տվել համապատասխան պարզաբանումներ:

2022²⁰ թվականի Տարեկան ծրագրի մասով նշենք, որ, ըստ Միասնական կայքի տվյալների, այն հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներն իրականացվել են 21.07.2021թ. մինչև 05.08.2021թ.: Այս ժամանակահատվածում նշված որոշման նախագիծը դիտվել է 3871 անգամ և դրա առնչությամբ հանրության կողմից որևէ առաջարկություն չի ներկայացվել:

Հարկ է նշել, որ 21.06.2022թ. մինչև 07.07.2022թ. ընկած ժամանակահատվածում Միասնական կայքում հանրային քննարկման է դրված եղել նաև 2023²¹ թվականի Տարեկան ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Թեպետ այն դեռ գտնվում է լրամշակման փուլում, սակայն վերը նշված հանրային քննարկման ժամանակահատվածում այն դիտվել է ավելի քան 1103 անգամ և դրա վերաբերյալ ևս որևէ առաջարկություն հանրության կողմից չի ներկայացվել:

Ցավոք, նույն պասիվ հասարակական ակտիվությունը դիտվում է նաև Տարեկան ծրագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերի հանրային քննարկումների ընթացքում: Մասնավորապես, Միասնական կայքում 30.09.2021թ. ընդունված «Սևանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2022թ. տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N1584-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ իրականացված հանրային քննարկման արդյունքների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ, չնայած այս նախագիծը դիտվել է ավելի քան 914 անգամ, դրա վերաբերյալ որևէ առաջարկություն կամ դիտողություն չի արվել:

Ավելին, Միասնական կայքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ, ինչպես Տարեկան ծրագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, այնպես էլ Տարեկան ծրագրերը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերի հանրային քննարկումների ընթացքում Միասնական կայքի այցելուները ոչ միայն դրանց վերաբերյալ առաջարկություններ կամ դիտողություններ չեն անում, այլ չեն օգտվել անգամ դրանց վերաբերյալ քվեարկելու Միասնական կայքի տրամադրած տեխնիկական հնարավորությունից:

ԲԱԺԻՆ Գ. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿՎԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՑՆԵՐՈՒՄ

Նախ, նշենք, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «ՀՕ-110-Ն օրենք») 14-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների համաձայն գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա գործունեության տեսակները ըստ բնագավառների և ըստ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանի դասակարգվում են երեք կատեգորիայի՝ Ա, Բ, Գ:

Հարկ է նշել, որ այս դասակարգումն իրականացված է նախատեսվող գործունեությունների ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության աստիճանի: Այսինքն, Ա կատեգորիայում ներառված են շրջակա միջավայրի վրա ամենավնասակար, իսկ Գ

²⁰ <https://www.e-draft.am/projects/3430>

²¹ <https://www.e-draft.am/projects/4467>

կատեգորիայում ամենացածր վնասակար ազդեցություն ունեցող գործունեության տեսակները:

Հաշվի առնելով Սևանա լճի ավազանի տարածքում նախատեսվող հնարավոր գործունեության տեսակները՝ նշենք, որ դրանք Ա կատեգորիայում ներառված չեն, այլ հիմնականում դասակարգվում են Բ կամ Գ կատեգորիաների: Այս իսկ պատճառով Չեկոյցի շրջանակներում Ա կատեգորիայի գործունեության տեսակների հանրային քննարկման առնչությամբ որևէ անդրադարձ չի կատարվել և ստորև ներկայացված են միայն Բ և Գ կատեգորիաների շրջանակներում իրականացվող հանրային լուսմների իրավական կարգավորումները:

Մասնավորապես, Բ կատեգորիայի առնչությամբ նշենք, որ համաձայն ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթների՝ ՀՕ-110-Ն օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում այն բոլոր գործունեությունները, որոնք նախատեսվում են իրականացնել բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ օրենքով նախատեսված Բ կատեգորիայի ընթացակարգով:

Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն Սևան ազգային պարկը հանդիսանում է բնության հատուկ պահպանվող տարածք: Ուստի, վերը շարադրված իրավադրույթի լույսի ներքո, Սևան ազգային պարկի տարածքում նախատեսվող գործունեության այն տեսակները, որոնք ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի դրույթների համաձայն ներառված չեն Ա կամ Գ կատեգորիաների մեջ, ապա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության են ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Ինչ վերաբերվում է Գ կատեգորիային, ապա ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դրանում ներառված են այն գործունեության տեսակները, որոնք, ի թիվս այլնի, նախատեսվում են իրականացնել ռեկրեացիայի և զբոսաշրջության բնագավառներում: Սևանա լճի ավազանի տարածքում իրականացվող գործունեության հիմնական տեսակների գոտիավորման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանք հիմնականում իրականացվում են ռեկրեացիոն գոտում, ուստի ՀՕ-110-Ն օրենքի վերը շարադրված դրույթների համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության են ենթակա Գ կատեգորիայի ընթացակարգով:

Բացի այդ հավելենք, որ բնապահպանության, ռեկրեացիայի, ջրային տնտեսության ոլորտում Սևանա լճի ունեցած առանցքային դերով պայմանավորված, դրան վերաբերող որոշ հիմնադրույթային փաստաթղթեր ՀՕ-110-Ն օրենքի իմաստով ենթակա են նաև ռազմավարական գնահատման և փորձաքննության:

Սակայն, մինչև ռազմավարական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում բուն հանրային քննարկումներին վերաբերվող օրենսդրական կարգավորումներին անդրադառնալը, նշենք, որ ՀՕ-110-Ն օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ փորձաքննության ներկայացվող հայտն, ի թիվս այլնի, պետք է պարունակի նաև տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ «ՏԻՄ») նախնական համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Նախ նշենք, որ ՀՀ գործող օրենսդրությունը որևէ կերպ չի կարգավորում նախատեսվող գործունեության վերաբերյալ ՏԻՄ-ի նախնական համաձայնության տրամադրման գործընթացը: Մասնավորապես, ՀՕ-110-Ն օրենքով որևէ կերպ սահմանված չէ, թե ինչ չափանիշների հիման վրա է ՏԻՄ-ը տալիս նախատեսվող գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն: Այլ կերպ ասած, նախնական համաձայնություն տալը կամ չտալը ամբողջությամբ թողնված է ՏԻՄ հայեցողական

լիազորությանը և համայնքի բնակչությունը գործնականում չունի որևէ լծակ մասնակցելու այս գործընթացին և ազդելու դրա վրա:

Մեր գնահատմամբ, նման կարգավորումը հղի է ՏԻՄ կողմից վերջինիս վերապահված լիազորությունների չարաշահման և նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի բնակչության իրական կամքը չարտահայտող դիրքորոշման տրամադրման ռիսկով: Հարկ է նշել, որ այս խնդիրը փորձ է արվել լուծել ներկայումս շրջանառվող ՀՕ-110-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծում: Նախագծով առաջարկվող կարգավորմամբ ՏԻՄ մինչև նախատեսվող գործունեության վերաբերյալ դիրքորոշում հայտնելը, ծանուցումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, նախ պետք է սահմանված ժամկետներում շահագրգիռ հանրությանը ծանուցի նախատեսվող գործունեության վերաբերյալ և միայն ազդակիր բնակավայրում իրականացված հանրային լսման արդյունքներով պայմանավորված լիազոր մարմնին և նախաձեռնողին տրամադրի նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն: Սակայն, նշված նախագիծը չի պարունակում կոնկրետ իրավական մեխանիզմներ հանրային լսման կայացած կամ չկայացած, հանրության կարծիքը դրական կամ բացասական որակելու առնչությամբ: Ուստի, գտնում ենք, որ նույնիսկ ներկայացված օրենսդրական փոփոխության ընդունման պարագայում վերը նշված խնդիրը գործնականում կշարունակի մնալ չկարգավորված և պարունակել նույն վերը թվարկված ռիսկերը:

Վերադառնալով հանրային քննարկմանը՝ նախ հակիրճ ներկայացնենք, թե ինչ է այն իրենից ներկայացնում ռազմավարական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում և անդադառնանք այս գործընթացներում հանրային քննարկումների առնչությամբ առաջացող հիմնական իրավական և գործնական խնդիրներին:

Թեև, ՀՕ-110-Ն օրենքը որևէ հստակ սահմանում չի տալիս հանրային քննարկումներ հասկացությանը, սակայն այս ինստիտուտի համապարփակ վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ դրա հիմնական նպատակն է ռազմավարական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում բացահայտելու ազդակիր համայնքերի բնակչության և շահագրգիռ հանրության դիրքորոշումը նախատեսվող գործունեության վերաբերյալ, դրանք առավելագույնը ներառել և հաշվի առնել նախատեսվող գործունեության հիմնադրույթային փաստաթղթերում:

Հանրային ծանուցումների և քննարկումների իրականացման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 19.11.2014 թվականի N 1325-Ն որոշմամբ (այսուհետ՝ «N 1325-Ն որոշում»):

Նախ, նշենք, որ N 1325-Ն որոշման համաձայն Գ կատեգորիայի գործունեության տեսակները ենթակա են միայն նախնական գնահատման և փորձաքննության, հետևաբար նշված գործընթացներում կազմակերպվում են ընդամենը թվով երկու փուլով հանրային քննարկումներ:

Ինչ վերաբերվում է Բ կատեգորիայի գործունեության տեսակներին և ռազմավարական գնահատման ենթակա հիմնադրույթային փաստաթղթերին, ապա N 1325-Ն որոշման համաձայն՝ դրանք նախնական գնահատումից և փորձաքննությունից զատ ենթակա են նաև հիմնական գնահատման և փորձաքննության, որոնց ընթացքում իրականացվում են ևս երկու փուլով հանրային քննարկումներ:

Այլ կերպ ասած՝ Սևանա լճի ավազանի տարածքում նախատեսվող Գ կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում հանրային քննարկումներ պետք է իրականացվեն երկու, իսկ Բ կատեգորիայի գործունեության տեսակների և ռազմավարական գնահատման ենթակա հիմնադրույթային փաստաթղթերի դեպքում՝ չորս հանրային քննարկում:

Հանրային քննարկումների կազմակերպման մասով նշենք, որ N 1325-Ն որոշման պահանջների համաձայն՝ Սևանին առնչվող հիմնադրույթային փաստաթղթի դեպքում հանրային ծանուցումն ու քննարկումները առաջին և երրորդ փուլերում ձեռնարկողի (ՅՕ-110-Ն օրենքի իմաստով՝ փորձաքննության ենթակա հիմնադրույթային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ) հետ համատեղ պետք է իրականացնեն մարզպետը կամ համապատասխան ազդակիր վարչական շրջանի ղեկավարը (այսուհետ՝ «քննարկումների պատասխանատու»):

Ինչ վերաբերվում է հանրային ծանուցման և քննարկումների երկրորդ և չորրորդ փուլերին, ապա դրանք պետք է կազմակերպվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի (այսուհետ՝ «փորձաքննական կենտրոն») և քննարկումների պատասխանատուի կողմից՝ ձեռնարկողի մասնակցությամբ:

N 1325-Ն որոշման համաձայն՝ հանրային քննարկումները վարում է քննարկումների պատասխանատուն կամ իր կողմից նշանակված անձը, որն ապահովում է քննարկումների ամբողջ ընթացքի պատշաճ տեսաձայնագրումը և արձանագրումը: Հանրային քննարկումների արձանագրության մեջ նշվում են քննարկումների վայրը, օրը և ժամը, մասնակիցների կազմը, ինչպես նաև քննարկումներում հնչեցված բոլոր դիտողություններն ու առաջարկությունները: Արձանագրությունը պետք է ստորագրեն վարողը, արձանագրողը, քննարկումների պատասխանատուն և ձեռնարկողը: Մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով կցվում է արձանագրությանը: N 1325-Ն որոշման 21-րդ կետի համաձայն՝ քննարկումների ընթացքում հանրության կողմից բարձրացված բոլոր բանավոր հարցադրումներին պատասխանը տրվում է ձեռնարկողի, քննարկումների պատասխանատուի, փորձաքննական կենտրոնի մասնագետի կողմից անմիջապես:

Հաշվի առնելով Սևանա լճի ավազանի տարածքում իրականացման ենթակա հնարավոր գործունեության տեսակների վերը նշված կատեգորիաները՝ N 1325-Ն որոշման համաձայն՝ հանրությունը նախնական փորձաքննության փուլում գրավոր դիտողություններ և առաջարկություններ կարող է ներկայացնել ծանուցումից հետո 12, հիմնադրույթային փաստաթղթի նախնական գնահատման, հիմնական գնահատման և հիմնական փորձաքննության փուլում՝ ծանուցումից հետո 18, Բ կատեգորիայի համար՝ ծանուցումից հետո 13, իսկ Գ կատեգորիայի (նախնական գնահատման փուլ) համար՝ ծանուցումից հետո 12 աշխատանքային օրվա ընթացքում:

N 1325-Ն որոշման համաձայն՝ նշված ժամկետներում ներկայացված գրավոր դիտողություններին և առաջարկություններին ձեռնարկողը, քննարկումների պատասխանատուն, փորձաքննական կենտրոնի մասնագետը պետք է պատասխանեն 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Կարծում ենք, որ գրավոր դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու վերը նշված ժամկետները բավարար չեն քննարկման դրված փաստաթղթերը շահագրգիռ հանրության կողմից ուսումնասիրելու և իրենց առնչությամբ դիրքորոշում ներկայացնելու համար, հաշվի առնելով, որ դրանք հիմնականում կազմված են բավականին խրթին տեխնիկական լեզվով:

Սակայն նշենք, որ ներկայումս շրջանառվող ՅՕ-110-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծով այս ժամկետները բավականին երկարաձգվել են, ինչը մեր գնահատմամբ կարևոր քայլ է այս գործընթացներում հանրության լիարժեք մասնակցության ապահովման գործում:

Անդրադառնալով հանրության կողմից ներկայացվող դիտողություններին և առաջարկություններին՝ նախ նշենք, որ ՀՕ-110-Ն օրենքի 26-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներից բխում է, որ ձեռնարկողը և լիազորված մարմինը պարտավոր են հաշվի առնել հանրության միայն այն դիտողությունները և առաջարկությունները, որոնք հիմնավորված են, իսկ հաշվի չառնելու դեպքում տալ հիմնավոր պատճառաբանումներ: Սակայն, ներկա օրենսդրությունը որևէ կերպ չի սահմանում, թե ի՞նչ չափանիշների պարագայում են հանրության ներկայացրած առաջարկությունները և դիտողությունները համարվում հիմնավորված և ո՞ր պարագայում լիազորված մարմինը կամ ձեռնարկողը իրավունք չունեն դրանք չընդունել:

Վերը շարադրվածից զատ հանրային քննարկումների ոլորտում շարունակում է արդիական խնդիր մնալ նաև գործող օրենսդրությամբ դրանց կայացած կամ չկայացած համարելու, հանրության կարծիքը դրական կամ բացասական որակելու խիստ անորոշ և ոչ լիարժեք կարգավորումները: Մասնավորապես, այս խնդրի կարգավորմանը նվիրված N 1325-Ն որոշման միակ 29-րդ կետի համաձայն՝ հանրության կարծիքը համարվում է դրական, եթե քննարկումներին ոչ մեկը չի ներկայանում կամ դիտողություններ կամ առաջարկություններ չեն ներկայացվում: Միաժամանակ, գործող օրենսդրությամբ որևէ կերպ նախատեսված չէ, թե ո՞ր դեպքում է հանրության կարծիքը համարվում բացասական, իսկ հանրային քննարկումը չկայացած և դրանք ի՞նչ իրավական հետևանքներ կարող են առաջացնել:

Այսինքն, գործնականում ստացվում է, որ հանրային քննարկման պատասխանատուի կողմից միայն կազմակերպչական բոլոր գործողությունների կատարումը բավարար է հանրային քննարկումը կայացած համարելու և հանրության կարծիքը նախատեսվող գործունեության վերաբերյալ դրական որակելու համար, անգամ այն պարագայում, երբ քննարկմանը որևէ անձ չի ներկայանում: Ավելին, N 1325-Ն որոշման նույն կետի համաձայն՝ հանրության կարծիքը դրական է համարվում նաև քննարկմանը դիտողություններ կամ առաջարկություններ չներկայացնելու դեպքում:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հանրային քննարկման ընթացքում դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելը բավարար է հանրության կարծիքը բացասական որակելու համար և դրա շնորհիվ ունենալ որոշակի ազդեցություն նախատեսվող գործունեության վերաբերյալ իրականացվող գնահատման և փորձաքննության գործընթացների վրա: Սակայն, ՀՕ-110-Ն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից բխում է, որ փորձաքննական եզրակացությունը կազմելիս լիազոր մարմնի պարտականությունը սահմանափակված է միայն գործընթացի մասնակիցների ներկայացրած եզրակացությունները կամ կարծիքները հաշվի առնելով, իսկ նրանց կարծիքները չընդունելու դեպքում հիմնավոր պատճառաբանումներ տալով:

Ինչ վերաբերվում է հանրային քննարկումների արձանագրությանն ու տեսաձայնագրությանն, ապա N 1325-Ն որոշման 20-րդ կետի համաձայն հանրային քննարկումների արձանագրության մեջ պետք է նշվեն քննարկումների վայրը, օրը և ժամը, մասնակիցների կազմը, ինչպես նաև քննարկումներում հնչեցված բոլոր դիտողություններն ու առաջարկությունները: N 1325-Ն որոշման 22-րդ կետի համաձայն՝ քննարկումների պատասխանատուն, քննարկումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հանրային քննարկումների արձանագրությունն ու տեսաձայնագրությունը պետք է ներկայացնի փորձաքննական կետորոն, իսկ վերջինս N 1325-Ն որոշման 23-րդ կետի համաձայն՝ դրանք ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է տեղադրել իր պաշտոնական կայքում:

Սակայն հատկանշական է, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կետորոն» ՊՈԱԿ-ը չունի պաշտոնական կայք և վերջինիս կողմից հանրային քննարկումների

արձանագրությունները և տեսաձայնագրությունները հրապարակելու պարտավորությունը գործնականում չի կատարվում: Ավելին, ինչպես մնացած ոլորտներին վերաբերվող, այնպես էլ Սևանա լճի պահպանմանն ու կառավարմանն առնչվող հանրային քննարկումների արձանագրությունները չեն հրապարակվում նաև Նախարարության կայքէջում: Այս խնդրի վերաբերյալ փորձագիտական կենտրոնի և Նախարարության աշխատակիցների հետ ունեցած հեռախոսային քննարկման արդյունքում պարզվեց, որ Նախարարության կայքէջն ունի սերվերների խնդիր, այդ իսկ պատճառով արձանագրությունները և տեսաձայնագրությունները չեն հրապարակվում, սակայն փորձագիտական կենտրոնին ուղղված գրավոր հարցման հիման վրա հնարավոր է դրանց ծանոթանալ:

Այսինքն, ներկա իրավիճակով պայմանավորված, հանրությունը, ըստ էության, զրկված է մեկ միասնական հարթակում ցանկացած պահի առանց որևէ լրացուցիչ քայլերի, հանրային քննարկումների մասնակիցների կողմից առաջադրված հարցերին, առաջարկություններին և դիտողություններին ծանոթանալու, ձեռնարկողի, քննարկումների պատասխանատուի, փորձաքննական կենտրոնի մասնագետի կողմից դրանց տրված պատասխանները գնահատելու գործնական հնարավորությունից:

Ավելին, մեր գնահատմամբ նման պրակտիկան բացասաբար կարող է ազդել նաև հանրության և պետական լիազոր մարմինների արդյունավետ գործակցության վրա և հանգեցնել պետական մարմինների գործունեության թափանցիկության և արդյունավետության նկատմամբ հանրային անվստահության ձևավորմանը: Քանզի հանրությունը հասանելիություն ունենալով վեր նշված տեղեկատվությանը՝ անձամբ կարող է ուսումնասիրել այն և գնահատել ողջ գործընթացի արդյունավետությունը, նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրության կողմից արված դիտողությունների, առաջարկությունների և լիազոր մարմնի կողմից դրանց տրված պատասխանների հիմնավորվածությունը:

Վերջում կցանկանայինք անդրադառնալ նաև գործող օրենսդրությամբ շրջակա միջավայրի բնագավառում հանրության իրավունքների թերևս միակ՝ դատական պաշտպանության միջոցին: Մասնավորապես, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն ՀԿ-ն, ի թիվս այլնի, իրավունք ունի իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնել նաև շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

Սակայն, հարկ է նշել, որ նույն հոդվածի 3-րդ մասի դրույթների համաձայն այս իրավունքը խիստ սահմանափակված է, և ՀԿ-ն իրավասու է օգտվելու դատական պաշտպանության այս մեխանիզմից միայն այն պարագայում, եթե վերջինս օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրույթային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին, կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում հասարակական կազմակերպությունը գործունեություն է ծավալել շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

Իհարկե, իրավունքների դատական կարգով պաշտպանության առնչությամբ հարկ է նշել, որ այն թեև արդյունավետ, սակայն մասնագիտական մեծ ռեսուրսներ պահանջող և ժամանակատար գործընթաց է: Սակայն, այս պարագայում հաշվի առնելով նաև, որ իրավունքների պաշտպանության այս մեխանիզմը վերապահված է շրջակա միջավայրի ոլորտում գործունեություն ծավալող ՀԿ-ներին և դիտարկելով վերջիններիս պասիվությունն այս առնչությամբ, կարող ենք եզրակացնել, որ դատական պաշտպանության այս մեխանիզմը քաղաքացիական հասարակության կողմից ևս լիարժեք չի կիրառվում:

Անդրադառնանք նաև հանրային քննարկումների՝ լսումների մասին ներկա օրենսդրությամբ նախատեսված ծանուցման մեթոդների արդիականությանը:

N 1325-Ն որոշման 11-րդ կետի համաձայն՝ հանրային ծանուցումն իրականացվում է զանգվածային լրատվամիջոցներով, էլեկտրոնային փոստով, հայտարարություններով: N 1325-Ն որոշման 13-րդ կետի համաձայն՝ համապատասխան փուլի փաստաթղթերն ստանալուց հետո քննարկումների պատասխանատուն (տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները) երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցումը տեղադրում է իր պաշտոնական կայքում, փակցնում է իր նստավայրի և հանրային նշանակության շենքերի՝ հայտարարությունների համար առանձնացված ցուցատախտակի վրա, հրապարակում է ՀՀ պաշտոնաթերթում՝ քննարկումներից առնվազն յոթ աշխատանքային օր առաջ:

Վերը շարադրվածից բխում է, որ ծանուցման բոլոր ձևերը, բացառությամբ ՀՀ պաշտոնաթերթում հրապարակելուց, ունեն լրկալ ազդարարման բնույթ, որի պարագայում գործնականում հնարավոր է, որ շահագրգիռ հանրությունը՝ մասնավորապես շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող ՀԿ-ները ժամանակին չիրագեկվեն և չմասնակցեն հանրային քննարկումներին:

Սակայն հարկ է նշել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ներկա միջոցների և ցանկացած հարթակներից տեղեկատվության և ծանուցումների ստացման նպատակով բաժանորդագրման հնարավորությունների պարագայում ՀԿ-ները, ըստ էության, պատշաճ հետևողականության պարագայում կարող են ժամանակին տեղեկանալ կազմակերպվող հանրային քննարկումների մասին և մասնակցել դրանց:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտոնաթերթում ծանուցման հրապարակմանը, ապա, հաշվի առնելով տեխնոլոգիական զարգացումները և տպագիր մամուլի ֆունկցիոնալության էական անկումը, գտնում ենք, որ ծանուցման նման մեթոդը կրում է ձևական բնույթ և գործնականում չի ծառայում հանրությանը ծանուցելու իր նպատակին:

Դեպքի ուսումնասիրություն 2

Այս առնչությամբ, որպես մասնավոր դեպքի ուսումնասիրություն, կցանկանայինք ներկայացնել Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027թթ. կառավարման պլանի (այսուհետև՝ «Կառավարման պլան») ռազմավարական գնահատման և փորձաքննության գործընթացում անցկացված հանրային քննարկումները և դրանց արդյունքները:

Նախ նշենք, որ Կառավարման պլանի մշակման պահանջը բխում է ՀՀ ջրային օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, որոնց համաձայն Ջրի ազգային ծրագրից էլնելով՝ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը մշակում է ջրավազանային կառավարման պլանները՝ վեց տարի ժամկետով, որոնք հաստատվում են ՀՀ կառավարության կողմից:

Կառավարման պլանը մշակվել է Նախարարության կողմից՝ ԵՄ «Ջրային նախաձեռնությունն պյուս Արևելյան գործընկերության երկրների համար» ծրագրի (այսուհետև՝ «Ծրագիր») շրջանակներում և կոչված է հավասարակշռելու ջրօգտագործողների, ներառյալ գյուղատնտեսության, ձկնաբուծության, արդյունաբերության, Էներգետիկայի և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները, ինչպես նաև աջակցելու ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմիններին, վարչական մարմիններին և հանրությանը՝ ջրային ռեսուրսների ոլորտում որոշումների կայացմանը, և վերջին հաշվով դրանց ռացիոնալ և արդյունավետ օգտագործմանը: Ելնելով Կառավարման պլանի հետապնդած նպատակներից՝ հարկ է նշել, որ ՀՀ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին

մասի իմաստով այն համարվում է հիմնադրույթային փաստաթուղթ և ենթակա է շրջակա ռազմավարական գնահատման և փորձաքննության:

Կառավարման պլանի մշակման գործում Ծրագրի Ձրի միջազգային գրասենյակին աջակցել է «Ի ՍԻ Ի Զառաբար» ՄՊԸ-ն և դրա ռազմավարական գնահատման և փորձաքննության գործընթացում հանդես եկել որպես ձեռնարկող:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ ռազմավարական գնահատում անցած և դրական փորձաքննական եզրակացություն ստացած Կառավարման պլանը ենթակա է հաստատման ԶԶ կառավարության կողմից համապատասխան որոշմամբ, հարկ է ընդգծել, որ վերջինս գործող օրենսդրության համաձայն հանրային քննարկումներ պետք է անցկացնի երկու հարթակում. **առաջինը՝ որպես հիմնադրույթային փաստաթուղթ և երկրորդը՝ որպես ԶԶ կառավարության որոշման նախագիծ:**

Ելնելով վերը շարադրվածից՝ նախ անդրադառնալով **Կառավարման պլանը հաստատելու մասին ԶԶ կառավարության որոշման նախագծի հանրային քննարկմանը:**

Մասնավորապես, Միասնական կայքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Կառավարման պլանը²² հաստատելու մասին ԶԶ կառավարության որոշման նախագիծը հանրային քննարկման է դրված եղել 10.06.2022թ. մինչև 27.06.2022թ. ընկած ժամանակահատվածում, իսկ ներկայումս գտնվում է լրամշակման փուլում:

Ցավոք, ինչպես վերը շարադրված դեպքերում, այս նախագծի պարագայում ևս, ըստ Միասնական կայքի տվյալների, Կառավարման պլանը հաստատելու մասին ԶԶ կառավարության որոշման նախագիծը դիտվել է ընդամենը 1433 անգամ (09.12.2022թ. դրությամբ), դեմ է քվեարկել 1, իսկ կողմ՝ 0 անձ, որևէ առաջարկություն չի ներկայացվել: Վերը շարադրված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Կառավարման պլանը հաստատելու մասին ԶԶ կառավարության համապատասխան որոշման նախագծի հանրային քննարկումների ընթացքում հանրության կողմից առանձնակի հետաքրքրություն չի ցուցաբերվել:

Ինչ վերաբերում է **Կառավարման պլանի ռազմավարական գնահատմանը և փորձաքննությանը,** ապա Միասնական, ինչպես նաև Նախարարության կայքերում արված հրապարակումների համաձայն դրա շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական Էկոլոգիական գնահատման հաշվետվությունը 12.05.2022թ. ստացել է թիվ 0052-22 պետական փորձագիտական եզրակացությունը:

Կառավարման պլանի ռազմավարական գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կարծիքի բացահայտման առնչությամբ հարկ է նշել, որ ԶՕ-110-Ն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի և N 1325-Ն որոշման պահանջների համաձայն հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով կազմակերպվել և անց են կացվել 4 հանրային քննարկում:

Այս առնչությամբ հավելենք նաև, որ «Ձրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ԶԶ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ձրավազանային կառավարման պլանները կազմելու գործընթացում հասարակության մասնակցությունը պետք է ապահովվի հանրային լուսմներ և քննարկումներ կազմակերպելու, զանգվածային լրատվության միջոցներով այդ մասին տեղեկություններ հաղորդելու միջոցով:

Սակայն, ինչպես վերևում նշեցինք, Կառավարման պլանի վերաբերյալ իրականացված հանրային քննարկումների արձանագրությունները և տեսաձայնագրությունները փորձաքննական կենտրոնի կամ Նախարարության պաշտոնական կայքերում հրապարակված չեն: Նախարարության կայքէջում իրականացված որոնման արդյունքում

²² <https://www.e-draft.am/projects/4442>

հնարավոր է եղել գտնել միայն հանրային լսումների անցկացման վերաբերյալ ծանուցումները:

Միաժամանակ հարկ է նշել, որ Կառավարման պլանի վերաբերյալ Նախարարության կայքում հրապարակված փաստաթղթերի փաթեթում²³ ներառված «Սևանի ջրավազանային կառավարման պլան»-ի նախագծի և վերջինիս ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալի 31.01.2022թ.-ի N 2/26.2/626 և 18.02.2022թ.-ի N 2/26.2/1126 գրություններով ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիմքով կատարված լրամշակումների վերաբերյալ ամփոփ տեղեկագրի²⁴ ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Կառավարման պլանի վերաբերյալ բոլոր առաջարկությունները և դիտողությունները ներկայացվել են միայն պետական մարմինների կամ հիմնարկների կողմից, և շահագրգիռ հանրության որևէ ներկայացուցչի, այդ թվում Սևանա լճի պահպանության հարցերով զբաղվող որևէ ՀԿ-ի կողմից դրա վերաբերյալ չի արվել որևէ առաջարկություն կամ դիտողություն:

Սակայն հավելենք, որ ամփոփագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ձեռնարկողը գործնականում անդրադարձել է ներկայացված բոլոր առաջարկություններին և դիտողություններին, դրանցից 26-ն ընդունվել են և դրանց համապատասխան Կառավարման պլանի նախագիծը լրամշակել է, իսկ մնացած 22-ը չեն ընդունվել, կամ ընդունվել են ի գիտություն կամ մասնակի, և յուրաքանչյուրի վերաբերյալ ներկայացվել է պարզաբանում:

Չնայած վերը շարադրվածի, հարկ է նշել, որ Նախարարության կայքում հրապարակված փաստաթղթերի փաթեթում ներառված Կառավարման պլանի նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրա մշակման գործընթացում տարբեր շահառու կողմերի իրազեկվածության բարձրացման, այդ գործընթացին նրանց ներգրավելու նպատակով կիրառվել են լրացուցիչ գործիքակազմեր, ինչպիսիք են՝ հանդիպումների և հասարակական խորհրդատվությունների, տեղեկատվական արշավների կազմակերպումը:

Մասնավորապես, այդ գործընթացում կազմակերպվել են երկու հանրային խորհրդատվություններ: Առաջին հանրային խորհրդատվությունը անց է կացվել 2019 թվականի մարտի 12-ից մինչև ապրիլի 12-ն ընկած ժամանակահատվածում և ուղղված է եղել Սևանի ջրավազանի կառավարման տարածքի հիմնական խնդիրների քննարկմանը և համաձայնեցմանը: Իսկ երկրորդ հանրային խորհրդատվությունն անց է կացվել 2020 թվականի հունիսի 11-ից մինչև 17-ը և նպատակ է ունեցել ջրային մարմինների համար իրագործել բնապահպանական նպատակների միջոցառումների ծրագիրը: Ըստ Կառավարման պլանի նախագծի՝ յուրաքանչյուր հանրային խորհրդատվության ընթացքում լրացվել է 129 հարցաթերթիկ՝ ինչպես ՏԻՄ ներկայացուցիչների, այնպես էլ այդ համայնքների բնակիչների կողմից:

Ավելին, երկու հանրային խորհրդակցությունների ընթացքում լրացված հարցաթերթիկները ենթարկվել են համապարփակ և բազմակողմանի վերլուծության և դրանց արդյունքները ներառվել են Կառավարման պլանի նախագծում:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ թեև այս մեթոդը նախատեսված ՀՀ գործող օրենսդրության համաձայն չի կրում իմպերատիվ բնույթ, գործնականում դրա միջոցով հնարավոր է եղել այս գործընթացում ապահովել հանրային իրազեկվածության և մասնակցության ավելի բարձր մակարդակ, քան դրան հնարավոր էր հասնել միայն գործող օրենսդրությամբ նախատեսված իրավական գործիքակազմերի կիրառմամբ:

²³ <http://env.am/shrjaka-mijavayr/naxagcer>

²⁴ ampop-texekagir-sevani-jkp-rqh-i-iramshakvac.pdf

Դեպքի ուսումնասիրություն 3

Ստորև, որպես մասնավոր դեպքի ուսումնասիրություն, կցանկանայինք ներկայացնել նաև «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևանի թերակղզու ռեկրեացիոն գոտում Արտաշ Գրիգորյանի (այսուհետ՝ «Ձեռնարկող») կողմից ժամանցի բազմաֆունկցիոնալ հանգստի գոտու կազմակերպման (այսուհետ՝ «Նախատեսվող գործունեություն») առնչությամբ իրականացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը:

Նախ նշենք, որ Նախատեսվող գործունեության վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման լրամշակված հայտը²⁵ (այսուհետ՝ «Հայտ») Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակվել է 28.02.2022 թվականին: Հայտի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևանի թերակղզու ռեկրեացիոն գոտում և ՅՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 8-րդ կետի համաձայն հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեություն:

Հետևաբար, ՅՕ-110-Ն օրենքի դրույթների համաձայն Նախատեսվող գործունեությունը ենթակա է եղել միայն նախնական գնահատման և փորձաքննության: N 1325-Ն որոշման 3-րդ բաժնի պահանջների համաձայն նախնական գնահատման փուլում Ձեռնարկողը Նախատեսվող գործունեության վերաբերյալ համատեղ հանրային քննարկումներ կազմակերպելու նպատակով պետք է դիմեր ազդակիր համայնքի ղեկավարին (քննարկումների պատասխանատու): Սույն դեպքում ազդակիր համայնք է հանդիսացել Սևան համայնքը:

N 1325-Ն որոշման 31-րդ կետի համաձայն վերը նշված ծանուցումը ստանալուց հետո ոչ շուտ, քան 7-րդ աշխատանքային օրը Ձեռնարկողը Սևանի համայնքապետարանի աջակցությամբ պետք է իրականացներ Նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը: Նշված քննարկման ընթացքում Ձեռնարկողը մանրամասն պետք է ներկայացներ Նախատեսվող գործունեություն իրականացնելու իր մտադրությունը և առաջադրված հարցադրումներին տար համապարփակ պատասխաններ: Այնուհետև, N 1325-Ն որոշման 34-րդ կետի համաձայն քննարկման արձանագրությունները և տեսաձայնագրության կրիչը, ինչպես նաև Ձեռնարկողի կողմից կազմված ամփոփաթերթը, ստացված առաջարկությունների և դիտողությունների ընդունման կամ չընդունման վերաբերյալ հիմնավորումներով պետք է կցվեր նախնական գնահատման հայտին, իսկ հանրության դիտողությունների հիմնավորված պատասխանները ներառվեին հայտի կազմում և ներկայացվեին փորձաքննական կենտրոն՝ նախնական փորձաքննության:

Սակայն, Սևան համայնքապետարանի պաշտոնական կայքէջում իրականացված որոնումների արդյունքում հնարավոր եղավ գտել միայն Նախատեսվող գործունեության վերաբերյալ երկրորդ հանրային քննարկման հրավերը²⁶: Ինչ վերաբերվում է վերը նշված առաջին հանրային քննարկմանը, ցավոք, դրա վերաբերյալ որևէ էլեկտրոնային ծանուցում հնարավոր չեղավ գտնել Սևանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում:

Ուստի, ներկայացված դեպքում ոչ միայն խախտվել են ՅՕ-110-Ն օրենքի և N 1325-Ն որոշմամբ նախատեսված ընթացակարգային, այլ նաև նախնական գնահատման հայտին ՅՕ-110-Ն օրենքով ներկայացվող պահանջները: Մասնավորապես, նշենք, որ ՅՕ-110-Ն օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ ի թիվս այլնի, նախնական

²⁵ <http://env.am/storage/files/shmag-qexarquniwq-terakxi.pdf>

²⁶ <https://sevancity.am/Pages/Home/newsdetails.aspx?nid=2807>

գնահատման հայտը պետք է պարունակի տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լուսմների և ՏԻՄ-ի նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Սակայն, Նախատեսվող գործունեության վերաբերյալ Նախարարության կայքէջում հրապարակված Հայտի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն վերը պահանջվող ոչ մի տեղեկատվություն, այդ թվում Սևանի համայնքապետարանի կողմից տրված նախնական համաձայնության վերաբերյալ, չի պարունակում:

Ուստի, գործնականում որևէ հանրային աղբյուրից հնարավոր չէ ստանալ համապարփակ տեղեկատվության, թե արդյո՞ք Նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումն իրականում կազմակերպվել է, դրա ընթացքում հանրության կողմից ի՞նչ առաջարկություններ և դիտողություններ են ներկայացվել, արդյո՞ք Ձեռնարկողի կողմից դրանց տրվել են հստակ պարզաբանումներ և ի վերջո դրանք Ձեռնարկողի կողմից ընդունել են, թե՞ մերժել:

Ինչ վերաբերվում է Նախատեսվող գործունեության վերաբերյալ իրականացված երկրորդ հանրային քննարկմանը, ապա ինչպես նշվեց, Սևանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում N 1325-Ն որոշմամբ սահմանված ժամկետում այն հրապարակվել է: Սակայն ինչպես ներկայացված է, Հանրային քննարկումների նկարագրությամբ դրանց վերաբերյալ կազմված արձանագրությունները փորձագիտական կենտրոնի կողմից չեն հրապարակվում՝ պաշտոնական կայքէջ չունենալու, իսկ Նախարարության կայքում սերվերային խնդիրների պատճառով: Արդյունքում որևէ պաշտոնական աղբյուրից հնարավոր չէ ստանալ համապարփակ տեղեկատվություն հանրային քննարկման վերաբերյալ, մասնավորապես ի՞նչ առաջարկություններ և դիտարկումներ են հնչել հանրության կողմից և ի՞նչ պատասխան է տրվել դրանց Ձեռնարկողի և փորձագիտական կենտրոնի պատասխանատու մասնագետի կողմից:

Ավելին՝ այդ մասին որևէ նշում արված չէ անգամ Նախատեսվող գործունեության Նախնական գնահատման հայտի վերաբերյալ Նախարարության կողմից 06.04.2022 թվականին տրված ԲՓ 0032-22 պետական փորձաքննական դրական եզրակացության²⁷ մեջ: Մասնավորապես, նշված եզրակացության պատճառաբանական մասում միայն նշված է, որ հայտը լրամշակվել է ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա, սակայն որևէ կերպ ներկայացված չէ, թե խոսքն ինչ առաջարկությունների և դիտողությունների մասին է և ում կողմից են դրանք ներկայացված եղել:

Բացի այդ, եզրակացության նույն բաժնում նշված է, որ օրենսդրությամբ սահմանված կարգով Սևանի համայնքի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել Նախատեսվող գործունեության վերաբերյալ: Սակայն, ինչպես նշեցինք, նման եզրահանգման որևէ ապացույց որևէ պաշտոնական կայքում հրապարակված չէ:

²⁷ <http://env.am/storage/files/32-artash-grigoryan-sevan1.pdf>

ՍԵՎԱՆԱ ԼԵՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՆՎԱԽ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ա. Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով

Հանրային մասնակցության վերը ներկայացված ինստիտուտներից զատ կցանկանալիս անդրադառնալ նաև Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով), որն ըստ էության հանդիսանում է Սևանա լճին առնչվող հարցերով միակ անկախ մասնագիտական մարմինը:

Մասնավորապես, «Սևանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ Հանձնաժողովը ստեղծվում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ «ԳԱԱ») կառուցվածքում և կոչված է իրականացնելու Համալիր և Տարեկան ծրագրերի (հաշվետվությունների), ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող լիազորված մարմինների մշակած փաստաթղթերի անկախ և մասնագիտական փորձաքննությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Գեղարքունիքի մարզպետի լիազորած անձը:

Հանձնաժողովին վերապահված իրավասությունները սահմանված են «Սևանի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով և ներառում են հետևյալը.

- Համալիր և Տարեկան ծրագրերի (հաշվետվությունների), ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող փաստաթղթերի նախնական և ամփոփիչ փորձաքննությունների իրականացում և դրանց վերաբերյալ եզրակացությունների տրամադրում,
- Նախնական փորձաքննության արդյունքների հիման վրա համապատասխան առաջարկությունների մշակում և դրանց ներկայացնում լիազորված մարմիններին,
- մասնակցություն Սևանա լճի հետ կապված միջոցառումներին և հարցերի քննարկումներին,
- գիտական և փորձագիտական հետազոտությունների իրականացում, արձանագրությունների կազմում,
- լրացուցիչ մասնագետների ներգրավում,
- Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված և օրենսդրությանը չհակասող այլ լիազորությունների իրականացում:

Վերը շարադրվածից բխում է, որ Հանձնաժողովն ունի առանցքային դեր Սևանա լճին վերաբերող հարցերի քննարկման գործում և վերջինիս տրամադրած եզրակացությունն ըստ էության կողմնորոշիչ դեր պետք է ունենա այդ հարցերի առնչությամբ պետական մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացում:

Մասնավորապես, Համալիր և Տարեկան ծրագրերի (հաշվետվությունների) առնչությամբ, հարկ է նշել, որ «Սևանի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ դրանք Ազգային ժողովը քննարկում է միայն Հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում: Համալիր և Տարեկան ծրագրերի (հաշվետվությունների), ինչպես նաև դրանց իրականացումն ապահովելու նպատակով մշակված փաստաթղթերի վերաբերյալ Հանձնաժողովը փորձագիտական եզրակացություն է տալիս դրանց ստացման օրվանից՝ մեկամսյա ժամկետում:

Հանձնաժողովի եզրակացությունները և կազմած արձանագրությունները ՀՀ կառավարությունից բացի եռօրյա ժամկետում պաշտոնապես ուղարկվում են նաև ՀՀ Նախագահին և Ազգային ժողով: Ավելին, նույն օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն

Հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողովի նիստում ներկայացնում է Հանձնաժողովի նախագահը:

Թեև Հանձնաժողովը չունի որևէ պաշտոնական կայքէջ, վերջինիս կողմից իրականացվող գործունեության որոշ դրվագների կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պաշտոնական կայքէջի նորություններ բաժնում:

Ցավոք, այս Չեկոյցի կազմման ընթացքում վերը նշված կայքէջում հնարավոր չեղավ գտնել Համալիր և Տարեկան ծրագրերի (հաշվետվությունների) վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները: Սակայն նշենք, որ ՀՀ ԳԱԱ պաշտոնական կայքէջի նորություններ բաժնում իրականացված որոնումների արդյունքում կարողացանք ծանոթանալ Հանձնաժողովի կողմից իրականացված որոշ քննարկումների:

Մասնավորապես, ըստ ԳԱԱ կայքի, 04.05.2022թ.²⁸ Հանձնաժողովում քննարկվել է ՀՀ կառավարության «Ռոզման նպատակով 2022 թվականին Սևանա լճից ջրառի մասին» որոշման նախագիծը: Նախագծով նախատեսվել է Սևանա լճից իրականացնել մինչև 170 միլիոն խմ ջրառ: Ըստ հրապարակված տվյալների Հանձնաժողովը նշված նախագծի վերաբերյալ տվել է համաձայնություն և որպես հիմնավորում նշել, որ նման չափաքանակով ջրառը համապատասխանում է «Սևանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով հաստատված առավելագույն չափաքանակին: Բացի այդ, ըստ կայքում արված հրապարակումների, 24.10.2022թ.²⁹ Հանձնաժողովի նիստում, որին մասնակցել են նաև այլ գերատեսչությունների և նախարարությունների ներկայացուցիչներ, քննարկվել է նաև Սևանա լճի ավազանում ոչ մետաղական հանքերի խնդիրը: Այդ քննարկման ընթացքում մասնավորապես որոշվել է, որ Հանձնաժողովը նամակով դիմի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որպեսզի Սևանա լճի ավազանի համար իրականացվի ռազմավարական ՇՄԱԳ գնահատում՝ պարզելու, թե ավազանում տնտեսական տարբեր գործունեության տեսակները գումարային ինչ ազդեցություն են ունենում Սևանա լճի վրա:

Բ. Շրջակա միջավայրի նախարարությանը կից ստեղծված հասարակական խորհուրդ

Վերջում, որպես շրջակա միջավայրի պահպանության ոլորտում հանրային մասնակցության մասնավոր դրսևորում, կցանկանայինք ներկայացնել նաև Նախարարությանը կից գործող Հասարակական խորհուրդը (այսուհետ՝ «խորհուրդ»), թեև վերջինս Սևանա լճին վերաբերյալ հարցերով հատուկ ստեղծված մարմին չի հանդիսանում: Վերջինս ստեղծվել է Շրջակա միջավայրի նախարարի 26.02.2021թ. թիվ 61-Լ որոշման համաձայն և հանդիսանում է Նախարարության խորհրդակցական մարմին: Նշվածից բխում է, որ այն չունի որևէ իրավական լծակներ Նախարարության կողմից Սևանա լճի պահպանման և կառավարման հետ կապված հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու առնչությամբ:

Ավելին, Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ստեղծվելուց ի վեր այս խորհրդում տեղի է ունեցել ընդամենը մեկ նիստ, այն է՝ 30.04.2021 թվականին: Նիստի արձանագրության ուսումնասիրությունից կարելի է փաստել, որ թեև խորհրդի կազմում ջրային ռեսուրսների վերաբերյալ հարցերի համար ստեղծվել է առանձին աշխատանքային խումբ, սակայն որևէ պաշտոնական աղբյուրում որևէ տեղեկատվություն այս աշխատանքային խմբի կողմից կատարված գործունեության վերաբերյալ հրապարակված չէ:

²⁸ <https://www.sci.am/m/newsview.php?id=513&arch=0&langid=1#top>

²⁹ <https://www.sci.am/m/newsview.php?id=593&arch=0&langid=1#top>

Բացի այդ, նիստի արձանագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրա ընթացքում Սևանա լճի պահպանման և կառավարման վերաբերյալ որևէ հարց օրակարգում ներառված չի եղել և չի քննարկվել: Առհասարակ, պաշտոնական աղբյուրներում հորհրդի գործունեության մասին առկա են հատուկենտ տեղեկություններ, որոնք որևէ կերպ չեն առնչվում Սևանա լճի պահպանությանը և կառավարմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով վերը ներկայացված ուսումնասիրության, ինչպես նաև դրա շրջանակներում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների և պետական լիազոր մարմինների ներկայացուցիչների հետ ունեցած հարցազրույցների արդյունքները, Սևանի ավազանի կառավարմանը հանրության մասնակցության վերը ներկայացված իրավական հնարավորությունների վերաբերյալ կցանկանայինք առանձնացնել հետևյալ դիտարկումները և առաջարկությունները:

1. Առկա մեխանիզմների վերաբերյալ հանրության վստահության պակասը

Գաղտնիք չէ, որ, չնայած շարունակաբար իրականացող բարելավումների, մեր հասարակությունում շարունակում է առանցքային խնդիր մնալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և արդյունավետության նկատմամբ հանրության ունեցած անվստահությունը: Այս երևույթը ակնհայտորեն դրսևորվում է նաև շրջակա միջավայրին առնչվող ինչպես իրավաստեղծ, այնպես էլ ՇՄԱԳ գործընթացներում:

Մեր գնահատմամբ, վերը նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ հաճախ այս գործընթացներում օրենքով նախատեսված հանրային մասնակցության նույնիսկ պարտադիր մեխանիզմները կրում են ձևական, պրոտոկոլային բնույթ և գործնականում ուղղված չեն հանրության իրական կարծիքի բացահայտմանը և այն հաշվի առնելուն:

Ուստի, հաշվի առնելով, որ Սևանա լճի ավազանի պահպանմանն ու կառավարմանն ուղղված իրավական ակտերի առաջին հնարավոր ազդեցությունը կրում են հենց այդ տարածքում ապրող բնակչությունը, առաջարկում ենք իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումները չսահմանափակել միայն Միասնական հարթակում իրականացվող հրապարակումներով:

Մասնավորապես, օրենքով նախատեսված հանրային քննարկումներից զատ, առաջարկում ենք գործող օրենսդրությամբ նախատեսել պարտադիր պահանջ առ այն, որ Սևանա լճի պահպանմանը և կառավարմանը ուղղված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային լսումներ իրականացվեն նաև այդ նախագծերով առաջարկվող կարգավորումների անմիջական ազդեցության համայնքներում: Գտնում ենք, որ այս պահանջը թույլ կտա նախ ազդակիր համայնքների բնակչությանը մատչելի կերպով իրազեկել նախատեսվող իրավական փոփոխության մասին, բացի այդ նախաձեռնող մարմինը հնարավորություն կունենա հավաքել նշված օրենսդրական (ենթաօրենսդրական) փոփոխության առաջին հնարավոր ազդեցությունը կրող հանրության դիտարկումները, արձագանքները և առաջարկությունները՝ արդյունքում ունենալով դրանց վերաբերյալ ավելի համապարփակ և բազմակողմանի տեղեկատվություն:

Բացի այդ կարծում ենք, որ այս գործընթացին հանրության ներգրավվածությունը գործնականում կնպաստի նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և ազդակիր համայնքի բնակչության միջև փոխհամագործակցության վստահելի մթնոլորտի ստեղծման և բարենպաստ հիմքեր կստեղծի դրա շարունակական զարգացման համար:

2. Թիրախային հանրության ներգրավվածության ապահովումը

Այս խնդիրն արդիական է հատկապես խոշորացված համայնքներում իրականացվող ՇՄԱԳ գործընթացում: Մասնավորապես, Սևան խոշորացված համայնքում ներկայումս ընդգրկված է 12 բնակավայր և, օրինակ, գործնականում Լճաշեն բնակավայրում նախատեսվող գործունեության ՇՄԱԳ գործընթացում հանրային քննարկումները կազմակերպվում են Սևան խոշորացված համայնքի ՏԻՄ-ի շենքում: Ուստի, նման հանգամանքներում, հաշվի

առնելով ՀՀ գյուղերում առկա սոցիալ-տնտեսական խնդիրները, ազդակիր բնակավայրերի բնակիչները շատ հաճախ անգամ չեն մասնակցում հանրային քննարկումներին: Արդյունքում ստացվում է, որ վերը շարադրված խոչընդոտների և հանրային քննարկումները կայացած որակելու ներկա օրենսդրական կարգավորման պարագայում այս ինստիտուտը իմաստագրվում է և կրում ձևական բնույթ:

Վերը ներկայացված խնդիրներից ելնելով՝ առաջարկում ենք ՀՕ-110-Ն օրենքով սահմանել պարտադիր պահանջ առ այն, որ հանրային քննարկումները կազմակերպվեն և անցկացվեն տվյալ խոչորացված համայնքի հենց անմիջական ազդակիր բնակավայրում, իսկ դրանք մեկից ավելին լինելու դեպքում նախնական հանրային քննարկումներ՝ դրանցից յուրաքանչյուրում:

Բացի այդ, շրջակա միջավայրին, այդ թվում նաև Սևանա լճին վերաբերող գործունեության տեսակների և հիմնադրույթային փաստաթղթերի վերաբերյալ ռազմավարական և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում որպես հանրության կարծիքի բացահայտման այլընտրանքային մեխանիզմ առաջարկում ենք ներառել նաև տեղական ինքնակառավարման մարմինների, ազդակիր համայնքների բնակչության, ՀԿ-ների կողմից թղթային և էլեկտրոնային հարցաթերթիկների լրացման պահանջը, սահմանել դրանց գնահատման չափանիշները:

Ավելին՝ առաջարկում ենք մշակել և ներդնել ծանուցման և իրազեկման այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան բացահայտել և հանրային քննարկումներին ազդակիր համայնքի բնակչությունից բացի ներգրավել նաև այդ ոլորտում մասնագիտացված ՀԿ-ների, միությունների ներկայացուցիչներին և անկախ փորձագետներին: Հակառակ դեպքում, շատ հաճախ հանրային քննարկման իրականացված լինելու պատրանք ստեղծելու համար, դրանց մասնակցում են ՏԻՄ-երի աշխատակիցները, ձեռնարկողի կողմից հրավիրված ազդակիր համայնքի բնակիչ չհանդիսացող անձիք:

3. Դերերի հստակ բաշխվածությունը

Ցավոք, հանրության մոտ շատ հաճախ նկատվում է ձևավորված և արմատացած թյուրըմբռնում այն մասին, որ ՇՄԱԳ գործընթացում ձեռնարկողը, քննարկումների պատասխանատու և փորձագիտական կենտրոնի ներկայացուցիչը հանդես են գալիս մի կողմից և նրանց վերջնական նպատակն է հասնելու նախատեսված գործունեության վերաբերյալ դրական փորձաքննական եզրակացության: Ինչով պայմանավորված՝ մարդկանց մոտ ձևավորել է կարծիք, որ իրենց մասնակցությունը և ցուցաբերած ակտիվությունը որևէ եական դեր չեն կարող ունենա այս գործընթացում, ինչն էլ բացասաբար է անդրադառնում այս գործընթացում հանրության ներգրավվածության և մասնակցության վրա:

Այս խնդրից ելնելով՝ առաջարկում ենք թե՛ օրենսդրական, թե՛ վարչարարության կազմակերպման մակարդակով փորձել ավելի հստակեցնել ՇՄԱԳ գործընթացի վերը նշված մասնակիցներից յուրաքանչյուրին վերապահված դերակատարումը և նրանց հետապնդած նպատակները այս գործընթացում:

4. Հանրային քննարկման կայացած համարելու և հանրության կարծիքի գնահատման չափանիշները

Մեր դիտարկմամբ, ինչպես իրավական ակտերի նախագծերի, այնպես էլ ՇՄԱԳ գործընթացում կազմակերպվող հանրային քննարկումների առնչությամբ առանցքային խնդիր է շարունակում մնալ հանրային քննարկման կայացվածության, ինչպես նաև հանրության կարծիքի գնահատման չափանիշների բացակայությունը: Մասնավորապես,

ինչպես ներկայացվեց Չեկույցի Գ բաժնում հանրային քննարկման կայացած կամ չկայացած համարելու որևէ հստակ իրավական մեխանիզմ ներկա օրենսդրական կարգավորմամբ նախատեսված չէ:

Ինչ վերաբերում է ՇՄԱԳ գործընթացում հանրության կարծիքը դրական որակելու միակ չափանիշին, այն է՝ որևէ մասնակցի չներկայանալը կամ որևէ դիտողություններ կամ առաջարկություններ չներկայացնելը, գտնում ենք այս ոլորտում առկա խնդիրների հաշվառմամբ, նման կարգավորումն ավելին քան արժեզրկում է հանրային քննարկումների ինստիտուտը:

Ուստի, լիովին կիսելով այն տեսակետը, որ մասնակցության մեխանիզմները զուտ «ֆորմալ» բնույթ չպետք է կրեն և մասնավոր դեպքերում ունեցած շահագրգռվածությամբ պայմանավորված չհանդիսանան ազդակիր համայնքի և առհասարակ պետության տնտեսական զարգացման համար արդյունավետ և վերահսկելի ռիսկերով գործունեության իրականացմանը խոչընդոտելու միջոց, այս գործընթացների նկատմամբ հանրության վստահության, ինչպես նաև ներգրավվածության բարձրացման նպատակով, կարևոր ենք համարում հանրային քննարկումների կայացած կամ չկայացած, հանրային կարծիքը դրական կամ բացասական որակելու հստակ և ռացիոնալ չափանիշների, քննարկումների ընթացքում արվող առաջարկությունների և դիտողությունների որակման որոշակի մեխանիզմների մշակումը և ներդրումը պետության կողմից:

5. Տեղեկատվության հասանելիությունը

Ինչպես վերևում ներկայացրեցինք, ներկայումս եական խնդիր է շարունակում մնալ Սևանի ավազանի տարածքում նախատեսվող գործունեության տեսակների վերաբերյալ իրականացվող ՇՄԱԳ գործընթացին առնչվող փաստաթղթերի ամբողջական փաթեթի չիրապարակված և ոչ հասանելի լինելը: Այս հանգամանքով պայմանավորված՝ գործնականում ավելի է բարդանում այս գործընթացում հանրության հնչեցրած դիտողությունների, առաջարկությունների, ձեռնարկողի, փորձագիտական կենտրոնի ներկայացուցիչների կողմից դրանց տրված արձագանքի վերաբերյալ համապարփակ և արդիական տեղեկատվության ստացումը:

Նմանատիպ խնդիր առկա է նաև Հանձնաժողովի գործունեության առնչությամբ, մասնավորապես, վերջինիս գործունեության վերաբերյալ համապարփակ տեղեկատվության անհասանելիության բացակայությունը:

Մեր գնահատմամբ, վերը ներկայացված տեխնիկական խնդիրները, համապատասխանաբար, բացասաբար են անդրադառնում հանրային քննարկումների ինստիտուտի արդյունավետության և դրա նկատմամբ հանրության ունեցած վստահության, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության թափանցիկության և դրա գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածության ապահովման վրա:

Այս առնչությամբ, ըստ էության, որևէ օրենսդրական առաջարկության կարիք չկա, քանի որ ՇՄԱԳ ամբողջական փաթեթի հրապարակման պահանջը գործող օրենսդրությամբ արդեն իսկ ամրագրված է: Ուստի, միակ առաջարկը կայանում է նրանում, այս տեխնիկական խնդիրները շտկելու, այն է՝ Նախարարության կայքէջի համար ավելի հզոր սերվերների ձեռքբերման կամ հենց փորձաքննական կենտրոնի համար կայքէջի մշակման նպատակով, պետական քյուշեով նախատեսվեն և այս մարմիններին հատկացվեն համապատասխան դրամական միջոցներ:

Ինչ վերաբերվում է Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովմանը, առաջարկում ենք ԳԱԱ պաշտոնական կայքէջում ավելացնել

Հանձնաժողովին նվիրված առանձին պատուհան, որտեղ կայքի այցելուները հնարավորություն կունենան ծանոթանալու Հանձնաժողովի գործունեությանը:

6. Հետադարձ կապի ապահովումը

Անհերքելի է, որ ցանկացած գործընթացի նկատմամբ վստահության և դրա արդյունավետության բարձրացման նպատակով կենսական դեր է խաղում շահագրգիռ կողմերի միջև մշտական հետադարձ կապի ապահովումը: Այս առնչությամբ բացառություն չեն կազմում նաև ՇՄԱԳ գործընթացը և իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումները: Սակայն գործող օրենսդրական կարգավորման, ինչպես նաև վերը նշված մասնավոր դեպքերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ներկայումս հանրության գրավոր ներկայացված դիտողություններին և առաջարկություններին ձեռնարկողի կամ փորձագիտական կենտրոնի ներկայացուցչի պատասխանները օրենսդրական պահանջից բացի այս գործընթացում ըստ էության չկան հետադարձ և մշտական կապի որևէ արդյունավետ մեխանիզմներ: Ավելի, գործող օրենսդրությունը չի նախատեսում անգամ այն իրավական հետևանքները, որոնք կարող են առաջանալ ձեռնարկողի կամ փորձագիտական կենտրոնի ներկայացուցչի կողմից հանրության գրավոր ներկայացրած դիտողություններին և առաջարկություններին չպատասխանելու պարագայում:

Ուստի, հանրության և մասնավոր հատվածի, ինչպես նաև պետական մարմինների միջև արդյունավետ փոխհամագործակցության ստեղծման նպատակով, առաջարկում ենք վերջիններիս միջև ստեղծել հետադարձ կապի մշտական խողովակներ, որոնք թույլ կտան հանրությանը իրեն մտահոգող, այդ թվում նաև Սևանի ավազանի պահպանմանը և կառավարմանն առնչվող հարցերով նշված անձանց անել առաջարկություններ, դիտողություններ և հետևել դրանց ընթացքին, գնահատել դրանց շնորհիվ արձանագրված արդյունքները: Նման միջոց կարող է հանդիսանալ Նախարարության կայքէջում նոր տեխնիկական հնարավորության ավելացումը, որը թույլ կտա հրապարակային հարցեր, առաջարկություններ ուղղել Նախարարությանը և համապատասխան մասնագետների կողմից նույնպես հրապարակային կարգով ստանալ դրանց պատասխանները, տեղեկատվություն դրանց առնչությամբ իրականացվող քայլերի մասին:

7. Հանրության մասնակցությունը Սևանին առնչվող խնդիրների վերաբերյալ

Անկասկած վերը նշված որևէ կետ հնարավոր չէ իրականացնել և ցանկալի արդյունքների հասնել, եթե ոչ միայն ազդակիր համայնքի բնակչությունը, այլ նաև ամբողջ հասարակությունը չունենա անկախ և վստահելի տեղեկատվություն Սևանա լճի ներկա իրավիճակի վերաբերյալ:

Ուստի, կարևորելով Սևանա լճի ունեցած կենսական դերը ՀՀ տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի պահպանության, բնական պաշարների արդյունավետ օգտագործման ոլորտում լիազոր մարմինն առաջարկում ենք Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի հետ համատեղ, յուրաքանչյուր տարի մշակել և հանրամատչելի լեզվով հրապարակել տարեկան զեկույց Սևանա լճի ներկա վիճակի, առկա խնդիրների ու ռիսկերի մասին:

Վերը ներկայացվածի վերաբերյալ ավելի լայն հասարակական իրազեկում ապահովելու համար՝ առաջարկում ենք նշված զեկույցը բաց դասերի միջոցով ներկայացնել նաև կրթական հաստատություններում, ինչը թույլ կտա նոր սերնդի մոտ ձևավորել ավելի հոգատար և պատասխանատու մոտեցում Սևանա լճի նկատմամբ և ունենալ ավելի թարմ ու արդիական տեղեկատվություն, քան առկա են ուսումնական նյութերում:

8. Հանրային մասնակցության մեթոդաբանության առաջարկություններ

Թեև, գործող օրենսդրությամբ նախատեսված են ինչպես իրավական ակտերի նախագծերի, այնպես էլ ՇՄԱԳ գործընթացներում հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, սույն ուսումնասիրության ընթացքում լիազոր մարմինների, ինչպես նաև ԶՀԿ ներկայացուցիչների հետ ունեցած հարցազրույցների ընթացքում պարզ դարձավ, որ գործնականում ըստ եռության չկա որևէ միասնական մեթոդաբանություն, որով լիազոր մարմինները կամ այդ գործընթացներում ներգրավված երրորդ անձիք (ձեռնարկող, հանրային քննարկումների պատասխանատու և այլն) կարող են առաջնորդվել վերը նշված գործընթացներում հանրային քննարկումները անցկացնելիս:

Սևանա լճի խնդիրներին առնչվող միջազգային աջակցության ծրագրերի քարտեզագրման ընթացքում ուսումնասիրելով ՄԱՉԾ-ի³⁰, ԳԷՀ-ի³¹, Եվրոպական հանձնաժողովի³² կողմից կիրառվող մեթոդաբանությունները, գտնում ենք, որ դրանք կարող են օգտակար ուղենիշեր հանդիսանալ հանրային քննարկումների ընթացքում հանրության հետ ավելի արդյունավետ և առարկայական համագործակցություն ձևավորելու, այս գործընթացները հանրության համար ավելի մատչելի և տեսանելի դարձնելու և դրանց նկատմամբ հանրության հետաքրքրության և վստահության բարձրացման գործում:

Ուստի, առաջարկում ենք լիազոր մարմիններին ինչպես իրավական ակտերի նախագծերի, այնպես էլ ՇՄԱԳ կամ հանրային մասնակցություն պահանջող այլ գործընթացներում հանրային քննարկումների անցկացման նպատակով կիրառել նշված մեթոդաբանությունները՝ ըստ նպատակահարմարության կամ դրանց հիման վրա մշակել այլ գործընթացներին առավել հատուկ և վերաբերելի ուղեցույց:

³⁰https://info.undp.org/sites/bpps/SES_Toolkit/SES%20Document%20Library/Uploaded%20October%202016/UNDP%20SES%20Stakeholder%20Engagement%20GN_Final_Dec2020.pdf

³¹ԳԷՀ Շահագրգիռ կողմերի ներգրավման վերաբերյալ քաղաքականություն. https://www.thegef.org/sites/default/files/council-meeting-documents/EN_GEF.C.53.05.Rev._01_Stakeholder_Policy_4.pdf

³² Եվրոպական հանձնաժողովի Ջրի շրջանակային դիրեկտիվի ընդհանուր իրականացման ռազմավարության Հանրության մասնակցության ուղեցույցը: https://www.chj.es/Descargas/ProyectosOPH/Consulta%20publica/PHC-2015-2021/ReferenciasBibliograficas/AguasSuperficiales/EC,2003.GuidanceNo03_pressures%20and%20impacts.pdf

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՁԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԶԱՐԵԶԱԳՐՈՒՄ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԾՐԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (ԵՄ-Ն ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՐ). Վերջին տարիներին, Հայաստանում իրականացված և հանրության մասնակցության մեծ բաղադրիչ ունեցող ծրագրերից է «Սևանա լճի շրջակա միջավայրի պաշտպանություն» (այսուհետ՝ «EU4Sevan») քառամյա ծրագիրը (2020-2024), որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (ՄԱՉԾ) հայաստանյան գրասենյակի կողմից՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համակարգմամբ:³³

Ծրագրի նպատակն է բարձրացնել Սևանա լճի շրջակա միջավայրի պաշտպանությունը և ջրի որակը: Ծրագիրն ունի հինգ արդյունք՝ 1) բարելավել Սևանա լճի ջրահավաք ավազանի ջրի մշտադիտարկումն ու կառավարման կարողությունները, 2) բարելավել Էկոհամակարգի համար բարենպաստ և ջուր ինսայող հողօգտագործման ու մշակման գործողությունների իրականացման կարողությունները, 3) բարելավել կեղտաջրերի մաքրման, ներառյալ բնության վրա հիմնված լուծումների իրականացման կարողությունները, 4) բարձրացնել Սևանա լճի պաշտպանության վերաբերյալ իրազեկումն ու տեղեկատվության հասանելիությունը ավազանին կից համայնքների, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի շրջանում և 5) բարելավել Սևանա լճի Էկոհամակարգի կառավարումը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել կամ իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

1. **Սևան ազգային պարկի կառավարման պլանի մշակում.** 2022թ-ին մեկնարկել է Սևան ազգային պարկի կառավարման նոր պլանի մշակումը: Պլանի մշակումը EU4Sevan-ի ՄԱՉԾ ծրագրի մաս է և իրականացվելու է կոնսորցիումի կողմից, որի մեջ մտնում են «Ա. Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը (Հայաստան), Սոյուստոն ՍՊԸ-ն (Հայաստան), DHP Conservation Ltd-ն (Չեխիա), և NaravaNarave d.o.o.-ն (Սլովենիա) ընկերությունը: Նախորդ կառավարման պլանը մշակվել է 2007թ-ին հինգ տարի գործողության ժամկետով, բայց 2011թ-ին և դրանից հետո չի թարմացվել:

Ծրագիրը, ըստ ներկայացված տեխնիկական առաջադրանքի, ունենալու է հանրության մասնակցության մեծ բաղադրիչ և ներառելու է տեղի համայնքներին, բնակիչներին և գիտական հանրությանը: Պլանի նպատակը ազգային պարկի կառավարման արդյունավետության բարձրացումն է և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումն է համապատասխան գործիքակազմի և կառավարման մոդելի մշակման միջոցով: Աշխատանքները մեկնարկել են 2022թ-ի հուլիսին տվյալների հավաքի և վերլուծության փուլով:

Կառավարման պլանի տեխնիկական առաջադրանքը մշակվել է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության և Սևան Ազգային պարկի հետ կապված այլ գերատեսչությունների և փորձագետների հետ համագործակցության միջոցով, որոնք ներկայացրել են իրենց մոտեցումները և պահանջները ակնկալվող արդյունքների մասով: Այսուհետև կազմակերպվել է ծրագրի մեկնարկային հանդիպում շահագրգիռ կողմերի հետ, որի ընթացքում քննարկվել է հանրության մասնակցության ապահովման աշխատանքային պլանը: Որպես կառավարման պլանի մաս՝ մշակվելու է կարողությունների զարգացման

³³<https://euneighbourseast.eu/projects/eu-project-page/?id=1512>

ծրագիր՝ ՇՄ նախարարության ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու նպատակով:

Փաստաթղթի հանրության մասնակցության բաղադրիչը նախատեսում է «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի նախագծի մշակումը և հաջորդող հանրային քննարկումների իրականացումը, որը կհանգեցնի Պլանի վերջնական հաստատմանը որպես հետագա աշխատանքների իրականացման գործիք:

2. **Սևանի ազգային տեսլականի ճանապարհային քարտեզ.** EU4Sevan ծրագրի շրջանակներում «Էդվայզ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն» ՍՊԸ-ն մշակում է Սևանի ազգային տեսլականի ճանապարհային քարտեզը: Նախագծի հիմքում հանրային մասնակցությունն է և նախատեսվում է տեսլականը մշակել տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ: 2022 թ.-ի սեպտեմբերին Շրջակա միջավայրի նախարարությունում տեղի է ունեցել տեսլականի ճանապարհային քարտեզի նախագծի քննարկում: Քննարկմանը մասնակցել են «Սևան» ազգային պարկի Շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների ու շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչներ: Քննարկմանը ներկայացվել է հաշվետվություն Սևանա լճի ազգային տեսլականի երեք նախնական սցենարներ և իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ:

Նպաստավոր միջավայր ջրի մակարդակի բարձրացմանն ուղղված արձագանքման միջոցառումների երկարաժամկետ զարգացման, պլանավորման և իրականացման համար. Գործողությունը ներառում է Սևանի մակարդակի բարձրացման հետ կապված ամբողջական բնապահպանական և սոցիալ-տնտեսական չափումներով համապարփակ ուսումնասիրություն՝ ուղղված ֆիզիկական ենթակառուցվածքների և լանդշաֆտների վրա ազդեցության հետ կապված ռիսկերի վերլուծությանը:

Մշակվելու է երկարաժամկետ գործողությունների ծրագիր՝ ջրի մակարդակի բարձրացմանն ուղղված խնդիրների լուծման ծախսերի հաշվարկներով: Ըստ ծրագրի ներկայացուցչի՝ գործողությունը ներառելու է շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ կոնսենսուսի հասնելու և ճանապարհային քարտեզ մշակելու համար: Գործողությունը նախատեսվում է սկսել 2022 տարեվերջին:

3. **Հայկական Էկոպորտալի Սևանա լճի բաժնի համապարփակ հայեցակարգի մշակում.** EU4Sevan ծրագրի մեկ այլ գործողություն է Հայկական Էկոպորտալի Սևանա լճի բաժնի համապարփակ հայեցակարգի մշակումը, որն իրականացվում է ծրագրի առաջին և հինգերորդ բաղադրիչների ներքո, որոնք են՝ Սևանա լճի ջրահավաք ավազանի ջրի մշտադիտարկումն ու կառավարման կարողությունների բարելավումը և Սևանա լճի Էկոհամակարգի կառավարման բարելավումը: Գործողությունը մեկնարկել է 2022թ.-ի մայիսին և իրականացվում է «ԳԵՈՒՆՖՈ» ՍՊԸ-ի կողմից: Նպատակն է ստեղծել տվյալների հասանելիության և կառավարման միասնական հարթակ, որը կներառի Սևանա լճի և դրա ավազանի վերաբերյալ բնապահպանական տվյալներ, ուսումնասիրությունների արդյունքներ և այլ անհրաժեշտ հանրամատչելի տեղեկատվություն:

4. Հանրային մասնակցության բաղադրիչ ունեցող աշխատանքներից են նաև, մասնավորապես, 2021 թ. օգոստոսից մինչև 2022 թ. հունվար ամիսը ծրագրի կողմից իրականացված ապակենտրոնացված եղանակով կոյուղաջրերի մաքրման փորձարկային կայանի կառուցմանն ուղղված տեխնիկատնտեսական

իրագործելիության ուսումնասիրությունը, որը հիմնված է եղել ազդակիր համայնքներում լայնածավալ քննարկումների վրա:

Խնդրի վերաբերյալ լայն շրջանակով համայնքների և շահագրգիռ կողմերի հետ արված քննարկումները ներառել են կոյուղաջրերի մաքրման մեթոդի ու տեսակի ընտրության, տեխնիկական, ֆինանսական, սոցիալական ու ինստիտուցիոնալ խնդիրները: Արդյունքում, ծրագրի կողմից ներկայացվել է քննարկումների արդյունքում կոյուղաջրերի մաքրման առաջարկվող տարբերակներից ամենաարդյունավետ համարված՝ կոյուղաջրերի մաքրման կայանի կառուցումը: Բացի այդ, դուրս են բերվել նաև այն համայնքները, որոնք պատրաստ են համագործակցելու պետության հետ համապատասխան ենթակառուցվածքի տեղադրման և սպասարկման ուղղությամբ:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ ԿԱՆՈՆԱԿՈՐ ՀԻՂԻՈԿԵՆՍԱՔԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. Ծրագիրն իրականացվել է 2021-2022թթ. Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից: Ծրագրի նպատակն էր վերանայել Սևանա լճի և նրա մեջ թափվող գետերի հիդրոկենսաբանական մոնիտորինգը, վերլուծել և առանձնացնել ենթակառուցվածքների և մարդկային կարողությունների կարիքները, առաջարկել ճանապարհային քարտեզ՝ լճի մոնիտորինգի ավելի համապարփակ պլանի ստեղծման ուղղությամբ՝ ապահովելու համար Էկոհամակարգի երկարաժամկետ կայունությունը:

Ծրագրի շրջանակում անցկացվել է մասնակցային սեմինար համապատասխան շահագրգիռ կողմերի (հետազոտողների և քաղաքականություն մշակողների) հետ՝ կարողությունների գնահատման, առաջարկվող մեթոդների, տվյալների փոխանակման և հիմնական շահագրգիռ կառույցների միջև համագործակցության վերաբերյալ կարծիքներ ստանալու համար:³⁴

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (ԵՄՁԼ+ ԱՁԱԿՑՈՒԹՅՈՒՆ). Ծրագիրը մեկնարկել է 2016թ. սեպտեմբերին՝ չորս տարի ժամկետով: Այն իրականացվել է Տնտեսական

համագործակցության և զարգացման կազմակերպության, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, ինչպես նաև ԵՄ մակարդակով կոնսորցիում կազմած Ավստրիայի Բնապահպանական գործակալության (Ավստրիա) և Ջրի միջազգային գրասենյակի (Ֆրանսիա) կողմից և ՀՀ շրջակա միջավայրի հետ համատեղ:³⁵

Ծրագրի նպատակն էր օժանդակել ջրային քաղաքականության բարեփոխումներին և ջրային ռեսուրսների կառավարումը համապատասխանեցնել ջրի կառավարման բնագավառում իրականացվող ԵՄ քաղաքականությանը:

Ծրագիրը ընթացքում իրականացվել է Սևանի և Հրազդանի գետավազանային կառավարման պլանների մշակումը: Պլանը նկարագրում է ավազանների բնապահպանական նպատակները և դրանց հասնելու համար նախատեսվող միջոցառումները:

Ծրագրի հաղորդակցության և հանրային մասնակցության ապահովման բաղադրիչի պատասխանատուն եղել է «Ազգային ջրային համագործակցություն» գիտական, Էկոլոգիական ՀԿ-ն, որն ուղղորդվել է «Ջրի շրջանակային դիրեկտիվի շրջանակներում հանրային մասնակցություն» ԵՄ ուղեցույցով սահմանված մեթոդաբանությամբ: Հանրությանը ներգրավելու գործընթացը մեկնարկել են շահագրգիռ կողմերի

³⁴<https://ace.aua.am/hy/projects/սևանա-լճի-ավազանում-կանոնավոր-հիդրոկ/>
³⁵<https://www.euwipluseast.eu/en/countries/armenia-country>

վերլուծությամբ: Ծրագրի իրականացման ընթացքում տեղի են ունեցել լայն հանրային խորհրդատվություններ շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ պետական լիազոր մարմինների, ջրավազանային պլանավորման կազմակերպությունների, փոքր և խոշոր ջրօգտագործողների, ՀԿ-ների ներկայացուցիչների, գիտնականներ ու լրագրողներ՝ պարզելու նրանց տեսակետները ավազաններում առկա հիմնական մարտահրավերների վերաբերյալ, որոնք են՝ որակյալ ջրի ապահովում, ջրային ռեսուրսի բաշխում, աղտոտման նվազեցում, անվտանգ խմելու ջրի ապահովում և մարդկանց առողջության պահպանում: Ըստ ծրագրի համակարգողների՝ փորձագիտական կարծիքներ և տեղեկատվությունը հավաքվել են՝ գետավազանային կառավարման պլանում լրացումներ կատարելու և դրա հետ կապված միջոցառումների ծրագիրը մշակելու համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ՀՀ ՇՄ Նախարարության կողմից մշակվել է «Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը:

«ՍԵՎՃՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԿՈՊԵՐՆԻԿՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ» (ՊՈՆՏՈՍ). Ծրագիրը մեկնարկել է 2020 թվականից և իրականացվել Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և միջազգային գործընկերների կողմից: Ծրագրի նպատակն էր Սևծովյան տարածաշրջանի երկրներում ամրապնդել համագործակցությունը՝ լայնածավալ բնապահպանական մշտադիտարկման նպատակով: ՊՈՆՏՈՍ ծրագրի շրջանակներում Հայաստանում պիլոտային տարածք է ընտրվել Սևանա լիճը: Դաշտային և արբանյակային տվյալների օգնությամբ ուսումնասիրվել են մի շարք պարամետրերի տատանումները, ինչպիսիք են՝ լճի ջրի մակերեսային ջերմաստիճանը, օրգանական նյութերի, աղի պոտենցիալ թունավոր տարրերի պարունակությունը: Ծրագրի առանցքում էր նաև տեղի շահագրգիռ կողմերի տեղեկացվածությունն ու թարմացումներին հասանելիությունն ապահովելը: Այս առումով, ծրագրի շրջանակներում կազմակերպվել են տարբեր ձևաչափերի մասնակցային միջոցառումներ, ինչպիսիք են աշխատաժողովներ, իրազեկման միջոցառումներ, մեդիա տուր, կոնֆերանս, հաքաթոն:³⁶

«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄՈՆԻՏԻՆԳ ՄՇԱԿՈՒՄ՝ ԼՃԻ ԵԿՈԼՈԳԻԱՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ԵՎ ՄՈՆԻՏԸ ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԻՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ» (SevaMod). Ծրագիրն իրականացվել է 2017-2019թթ. Հելսինկիի շրջակա միջավայրի հետազոտական կենտրոնը ՀՀ Գիտությունների ակադեմիայի հիդրոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ միասին: Ծրագրի նպատակը երկարաժամկետ գիտական գործիքի մշակումն էր: Գործիքը կարող է կանխատեսել ջրի որակի դինամիկան, որպեսզի լճի կառավարման համար պատասխանատու մարմինները կարողանան գիտելիքահենք որոշումներ կայացնել: 2020 թվականին մեկնարկել է ծրագրի երկրորդ փուլը՝ «SevaMod2»-ը, որի շրջանակում իրականացվում են Սևանա լճի համապարփակ մոնիտորինգային և գիտահետազոտական աշխատանքներ՝ հայ-գերմանական համագործակցությամբ: Ծրագրի ավարտին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանն է ներկայացվելու առաջարկների փաթեթ՝ Սևանա լճի ջրի որակի

³⁶<https://pontos-eu.aua.am>.

հիմնախնդիրների և ջրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարման վերաբերյալ:³⁷ Ծրագրի ավարտը նախատեսված է 2023թ. մարտին:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՅԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՃՆՈՒՆԴ՝ ՍՏՈՐՋՐՅԱ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏԵՆՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ. Երկամյա ծրագիրն իրականացվում է 2021թ. օգոստոսից «ԱրմԴայվինգ» ՀԿ-ի կողմից ՄԱԶԾ Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհների ծրագրերի շրջանակներում: Ծրագրի նպատակն է մաքրել Սևանա լճի հատակը լքված թակարդներից, ձկնորսական ցանցերից և այլ թափոններից, և հայտնաբերված նեյլոնե ձկնորսական ցանցերը վերամշակել և նոր ապրանքներ ստանալ: Ծրագրով նախատեսված է համայնքի բնակչության կարողությունների զարգացում՝ վերջիններիս ծրագրի աշխատանքներում ներգրավելու նպատակով: Մասնավորապես, ծրագրի ակնկալվող արդյունքներից են համայնքի երիտասարդների համար դասընթացների անցկացում՝ ծրագրի համար անհրաժեշտ տեխնիկա պատրաստելու և շահագործելու համար, և համայնքի բնակիչների համար դասընթացների անցկացում՝ թափոններից այլ ապրանքներ պատրաստելու համար:

ՍԵՎՃՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ ԾՐԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԶԱՆՔԵՐ (BEECO). ԵՀԳ Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցություն ծրագրի ֆինանսավորմամբ 2020 թվականից իրականացվող այս ծրագիրը ևս անդրադառնում է Սևանա լճին: Հայաստանում ծրագիրը ղեկավարում է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը: BeECO ծրագրի նպատակն էր բարձրացնել հասարակության բնապահպանական կրթության և իրազեկվածության մակարդակը, համատեղ ջանքերով մշակել շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված նորարարական մոտեցումներ՝ նպաստելու գետերի և Սևծովյան ավազանի աղտոտման կրճատմանը: Ծրագրի շրջանակներում ստեղծված հարթակի նպատակն է տարբեր շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, կրթական հաստատությունների, գիտահետազոտական կենտրոնների և պետական մարմինների միջև փորձի և գիտելիքի փոխանակումը, ինչպես նաև՝ համատեղ ջանքերով բնապահպանական կառավարումը:³⁸

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵՋԱՎՈՐ ԷԿՈՅԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ՝ ՈՒՂՎԱԾ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՈՒՏՆԵՐԻ. ՄԱԶԾ կողմից իրականացվող այս ծրագիրը, որի մեկնարկը նախատեսված է 2023թ.-ին, իրականացվելու է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF) գործընկերությամբ և ՄԱԶԾ վերահսկողությամբ: Շուրջ 3.6 միլիոն դոլար բյուջե ունեցող ծրագիրը ֆինանսավորվում է Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի կողմից և համաֆինանսավորվում ՀՀ կառավարության կողմից: Հնգամյա ծրագրի նպատակն է Սևանա լճի ավազանում պահպանվող տարածքների և կենսաբազմազանության այլ հիմնական տարածքների մոտակայքում խթանել լանդշաֆտային ինտեգրված մոտեցումը և հողերի դեգրադացիայի չեզոքությունը՝ հողօգտագործման ինտեգրված և տարածական պլանավորման միջոցով, ինչպես նաև՝ կենսաբազմազանության պաշտպանությունը «Սևան» ազգային պարկի տարածքում և դրանից դուրս:

³⁷<https://www.ufz.de/index.php?en=44302>, <https://regionalpost.org/en/articles/sevamod-project.html>.

³⁸[http://ysu.am/uploaded/BeECO_Information-session-invitation%20\(1\).pdf](http://ysu.am/uploaded/BeECO_Information-session-invitation%20(1).pdf),

[http://www.yso.am/uploaded/BeECO_Leaflet_Arm%20\(1\).pdf](http://www.yso.am/uploaded/BeECO_Leaflet_Arm%20(1).pdf), <http://www.be-eco.ro/hy/>

Որպես ծրագրի թիրախային համայնքներ են ընտրվել Մարտունին, Վարդենիսը, Շողակաթը, Եղեգիսը, Վայքը և Ջերմուկը:

Ծրագիրն ունի չորս հիմնական բաղադրիչ, որոնք ուղղված են Սևանա լճի ավազանի լանդշաֆտն ընդգրկող Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում հողի դեգրադացիայի չեզոքության (այսուհետ՝ «ՀԴԶ») թիրախների սահմանման և հողօգտագործման ինտեգրված և տարածական պլանի մշակման աջակցմանը, գրեթե ամբողջությամբ Սևանի կարևոր կենսաբազմազանության տարածքի հետ համընկնող Սևան ազգային պարկի կառավարման ուժեղացմանը, ՀԴԶ-ին համապատասխան հողերի կայուն կառավարման միջոցառումների մշակմանը, գյուղատնտեսական-բնապահպանական վճարման սխեմայի ստեղծմանը/ ներդրմանը:

Ծրագիրը կազմվել է մասնակցային եղանակով գաղափարի մշակման փուլից սկսած, երբ ծրագրի մշակման թիմը խորհրդակցություններ է անցկացրել տարբեր շահագրգիռ կողմերի հետ: Մինչ ծրագրի մեկնարկը՝ նախապատրաստական փուլում, կազմվել է շահագրգիռ կողմերի ներգրավման պլան, որի նպատակն է վեր հանել և վերլուծել ծրագրի պոտենցիալ շահագրգիռ կողմերին, հատկապես խոցելի խմբերին, վերջիններիս հետ քննարկել ծրագրով նախատեսված միջոցառումները և արդյունքները, պոտենցիալ ռիսկերը և դրանցից խուսափելու մեխանիզմները, և այլն:

ԱՅԼ

Վերջին տարիներին հանրության մասնակցության բաղադրիչ ունեցող նախաձեռնություններից են նաև SOS Sevan, Save Lake Sevan, Sorry Sevan, Clean Sevan ծրագրերը, որոնց ընդհանուր նպատակն է իրականացնել գործողություններ՝ ի նպաստ լճի առողջացմանը, ծաղկման պատճառների վերհանմանը և կանխարգելմանը, ջրիմուռներից լճի մաքրմանը, հավելյալ ջրառի և արտանետումների թողած ազդեցության խնդիրների քննարկմանը, շրջակա միջավայրի մասին մարդկանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. Beierle, T.C. and Cayford, J. (2002) *Democracy in Practice: Public Participation in Environmental Decisions*. Washington DC: Resources for the Future.
2. Gene Rowe, Tom Horlick-Jones, John Walls, Wouter Poortinga, Nick F. Pidgeon. Analysis of a normative framework for evaluating public engagement exercises: reliability, validity and limitations. *Public Understanding of Science*, SAGE Publications, 2008, 17 (4), pp.419-441. 10.1177/0963662506075351. hal-00571120
3. Gene Rowe, Tom Horlick-Jones, John Walls, Wouter Poortinga, Nick F. Pidgeon. Analysis of a normative framework for evaluating public engagement exercises: reliability, validity and limitations. *Public Understanding of Science*, SAGE Publications, 2008, 17 (4), pp.419-441.
4. Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարություն: Նախագծեր՝ <http://env.am/shrjaka-mijavayr/naxaqcer>
5. <http://env.am/storage/files/32-artash-grigoryan-sevan1.pdf>
6. <http://env.am/storage/files/shmag-gexarquiwq-terakxzi.pdf>
7. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150170>
8. [http://www.yso.am/uploaded/BeECO_Leaflet_Arm%20\(1\).pdf](http://www.yso.am/uploaded/BeECO_Leaflet_Arm%20(1).pdf), <http://www.be-eco.ro/hy/>
9. [http://ysu.am/uploaded/BeECO_Information-session-invitation%20\(1\).pdf](http://ysu.am/uploaded/BeECO_Information-session-invitation%20(1).pdf)
10. <https://ace.aua.am/hy/projects/սևանա-լճի-ավազանում-կանոնավոր-հիդրոկ/>
11. https://info.undp.org/sites/bpps/SES_Toolkit/SES%20Document%20Library/Uploaded%20October%202016/UNDP%20SES%20Stakeholder%20Engagement%20GN_Final_Dec2020.pdf
12. <https://iwlearn.net/resolveuid/6af5017fa3a56bc7b8428f71c100362e>
13. <https://pontos-eu.aua.am>
14. <https://sevancity.am/Pages/Home/newsdetails.aspx?nID=2807>
15. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002>
16. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=77849>
17. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=891>
18. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>
19. <https://www.e-draft.am/projects/1939>
20. <https://www.e-draft.am/projects/2714>
21. <https://www.e-draft.am/projects/3430>
22. <https://www.e-draft.am/projects/3499/about>

23. <https://www.e-draft.am/projects/4442>
24. <https://www.e-draft.am/projects/4467>
25. <https://www.euwipluseast.eu/en/countries/armenia-country>
26. <https://www.sci.am/m/newsview.php?id=513&arch=0&langid=1#top>
27. <https://www.sci.am/m/newsview.php?id=593&arch=0&langid=1#top>
28. <https://www.ufz.de/index.php?en=44302>, <https://regionalpost.org/en/articles/sevamod-project.html>
29. Rowe, G. and Frewer, L.J. (2005) “A Typology of Public Engagement Mechanisms,” *Science, Technology and Human Values* 30(2): 25 1–90.
30. ԳԷՉ Շահագրգիռ կողմերի ներգրավման վերաբերյալ քաղաքականություն.
https://www.thegef.org/sites/default/files/council-meeting-documents/EN_GEF.C.53.05.Rev_.01_Stakeholder_Policy_4.pdf
31. Եվրոպական հանձնաժողովի Ջրի շրջանակային դիրեկտիվի ընդհանուր իրականացման ռազմավարության Հանրության մասնակցության ուղեցույցը
32. Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում 31 մարտի 2016 թվականի N 337-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=104665>
33. ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի» մասին: Ընդունման ամսաթիվը՝ 21.03.2018: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733>
34. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» (օրենքը խմբ. 16.12.16 ho-237-ն): Հոդված 11: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153407>